սով պաշտպանել իրենց ֆեոդալական իրավունքները, այլև հեշտաթխամբ նախճում էին մանդոլ խաների և բարձր աստիճանավորների համակրանքը և քաղաքական գործողությունների բնագավառում առաջնակարգ դեր կատարում: Վիլհելմ-գե-նուսթուսկը Բաթու խանի սեղիզենյախալում հանդիպում է մի ոմն հայ զիվանազեաի՝ Գովիթ անունով, որ գիտեր արաբերեն, թուրքերեն և ասորերեն 1): Այն մասին, որ իրոք հայ զիվանազեաները բնականապես խոշոր քաղաքական ազդեցություն ունեին մանդոլ խաների արքունիքում և օգտվում էին նրանց փոստհաթխումից, հաստատվում է պատմական գտնումներով: Մենք ունենք տեղեկություն այն մասին, որ մանդոլների մեծ խան Գույուկը իր անձնական նամակը մեծ շքանշանով 1246 թվին Հոսմի պապին է ուղարկում մի հայ զիվանազեա Սարգիս Արեղայի ձեռքով: Այդ տեղեկությունը հայանի է այն նամակից, որ գրել է Գույուկ խանը՝ հասցեագրված Հոսմի պապ Իննովիկենտիս 4-րդին: Նամակի տեքստը գրված է պարսկերեն լեզվով և գեանդված է հայանի ֆրանսացի արևելագետ Պուլ-Պե-լիսնի «Մանդոլները և պապականությունը» վերջին ֆրանսերեն աշխատության մեջ: Վերահիշյալ նամակը վերջանում է այսպես. «Պապ... Գույուկ արքայազոր էս քս թագավորների հետ միասին գալ մեզ մաս և սղջունել մեզ... եթե դու չես գալու, ուղարկիր զեադան, մեզ հայանելու՝ գալու ես, թե ոչ, ուղում ես մեզ հետ հաշտ ապրել, թե մնում ես մեր թշնամին, ահա այս մեր պահանջը ուղարկում ենք Սարգիս Արեղայի ձեռքով» 2): Մեջբերումից երևում է, որ իրոք Սարգիս Արեղան կատարել է միջնորդի դեր Հոսմի պապ Իննովիկենտիս 4-րդի և Մանդոլական մեծ ինքնակալ Գույուկ խանի միջև: Քրիստոնեություն և հասկապես հայ մտավորականների դերը և կալուստայի ազդեցությունը մանդոլների տիրապետության շրջանում հաստատվում է ոչ միայն հայ պատմագիրների, այլ նաև պարսկական ու արաբական մատենագիրների կողմից: Այսպես օրինակ, պարսիկ խոշորագույն պատմագիր Ռաշիդ-է-Գ-Ինը, որ Հուլադու խանի մաս օրպես ֆինանսների կատավարի էր աշխատում, լավ տեղյակ լինելով ժամանակի իրադրություններին, գրում է, թե մանդոլ թագավորները, բնույններով քրիս-

1) Ռուբրուկ, նույն տեղը էջ—54.
 2) Պուլ-Պելիս—նույն տեղը էջ—30-31.

տոնեությունը, այնքան երես էին տվել նրանց, որ մուսուլմանները քրիստոնյաների մաս բարձր ձայնով անգամ խոսեցու իրավունք չունեին: Ռաշիդ-է-Գ-Ինը գրում է. «Ոչ մի մանդոլական կամ նրա կողմնակիցները չէին համարձակվում նըրանց (քրիստոնյաների) ներկայությունը բարձր ձայնով անգամ խոսել»: Ահա նրա խոսքերի պարսկերեն տեքստը.

«از انکار دین اسلام عالی
 نبود کار نصاری در عهد
 دولت او بالا گرفت و
 هیچ مسلمانی را یا رای
 آن نبود که با ایشان
 سخت گوید»

Այդ մասին վկայում է նաև արաբական պատմագիր Իբն-Ալ-Զախիրը: Նա գրում է. «Մեզ տեղեկություններ են հասել, որ Հուլադու խանը ի պատիվ իր քրիստոնյա կնոջ, թույլ է տվել մուսուլմաններին խաչի կրոնը իր արքունիքում, զերադասելով իր կնոջը ավելի, քան իր հավատը, խցիկ է անհավատների կաթողիկոսին խաչիֆների սրբազան օջախը» 2):

Այն փաստը, որ մանդոլների տիրապետության շրջանում հայկական կուլտուրան առաջնակարգ տեղ էր գրավում, վկայում են ոչ միայն պատմագիրները, այլ այդ մասին գոյություն ունեն նյութական կուլտուրայի հուշարձաններ՝ պահպանված մինչև մեր օրերը: Սովետական խոշորագույն գիտնական ակադեմիկոս Նիկ. Յակ. Մաուր իր հայտնի հոդվածում՝ «Արքայազան-քրիստոնեաներին մանդոլների աված անունը, կապված հայ քաղկեդոնականների հարցի հետ», գրում է. «Մինորիտ Անդրի 1326 թվի նամակից մենք իմանում ենք, որ մի հա-

1) Ռաշիդ-է-Գ-Ին—նույն տեղը էջ—61.
 2) Тизенгаузен—«Сборник материалов относящихся к истории золотой орды»—С. Петербург, 1884, т-І, стр. 55.

բաւա հայուճի այդ ժամանակ կանտոնում կառուցել է մի մեծ
և զեկեցիկ եկեղեցի» 1): Նույն աշխատանքի մեջ ակադեմիկոս
Ն. Յա. Մառը հիշատակում է մի այլ փաստ՝ «1375 թվին կա-
տալոնական քարտեղը վկայում է, որ հայերը Իսիկ-Կուլի լճի
մոտ ունեցել են հայկական վանք» 2): Հայաստանի սուս գիտնա-
կան արևելագիտ ակադեմիկոս Բաբայանը հայտնում է, թե Բուլ-
զար քաղաքում, Վոլգայի վրա և Մեմֆիսում մնացել են չայ-
կական դամբաններ հայերեն տաղանդազրով 3):

Նույն հեղինակի վկայութեամբ Իսիկ-Կուլիի մոտ կառուց
ված հայկական վանքը «Հայ եղբայրներ» անուն է կրել:
Մեծ Հայքից մի շարք խոշոր ֆեոդալներ սերտ հարաբերու-
թյան մեջ են մտել մոնղոլ տիրակալների հետ: Կովկասի ֆեո-
դալներից կարելի է հիշել Աթաբեկ Իվանեի որդի Ավագին, որ
հանձնվեց մոնղոլներին և նրանց մոտ ծառայութեան մասով:
Ավագի՝ մոնղոլներին հանձնվելու փաստը վրաց պատմագիրը
հետևյալ կերպ է բացատրում, նա գրում է՝ «Երբ մոնղոլական
զորքերը մորեխի պես տարածվեցին Կովկաս և սկսեցին ավե-
րել ու կործանել երկիրը, Ավագը ամբանում է հայկենի բերդը
և այնտեղից տեսնելով նոյինների շարագործութեանը՝
Հովհան (Իվանե) Աթաբեկի որդի՝ Ավագ ամիրսպասալարը դես-
պաններ ուղարկեց Պարսավ (Բարդավ), որ վերահիշյալ իշխան
ները կանդ էին առել... այդ ժամանակ էր Չարմաղանը դրա-
վել Անին: Սրանց մոտ ուղարկեց Ավագը դեսպան՝ հաշտու-
թյուն խնդրելու... նրանք (մոնղոլները Ա. Գ.) ուրախութեամբ
ընդունեցին Ավագի դեսպանին և հաստատ երգումով կատարե-
ցին խնդիրը... հենց որ Ավագի դեսպանները վերադարձան և
հաղորդեցին սրա մասին, Ավագը... զնաց Չարմաղանի, Չար-
տայի, Բիշոռի և Իոսարի մոտ, որոնք պատվեցին և սիրեցին
նրան, նշանակելով պահապաններ նրա քաղաքներում և եր-
կրներում...» 4): Վրաց պատմագրի հաղորդած տեղեկութեաննե-
րը հաստատվում են հայ մատենագիրների կողմից: Դեպքերին
ժամանակակից Մխիթար Այրիվանեցին այդ մասին գրում է.

1) Н. Я. Марр — «Византийский временник», том XII.
вып. 1-4, стр. 46.
2) Н. Я. Марр, в том же, стр. 42-45.
3) В. В. Бартольд — «История изучения Востока в Евро-
пе и России», стр. 78.
4) Պրոֆ. Լ. Մելիքսեթ Բեկ, նույն տեղը էջ 51-55

Իսկ ինչ վերաբերում է Ավագի ամիրսպասալար կոչում ստանալուն,
մենք ունենք տեղեկութեաններ Սահպաննո Օրբելյանի մոտ: Նա գրում է
«է առ և գԱթաբեկութունն որդին Իվանեի Ավագն» (տես Օրբելյան, նույն
տեղ, էջ 328)

«Քակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս
զհայոց, ըզվրաց և զաղանից... և ի միում ամի է ՈԶԵ (1236)
թուին առին առ հասարակ և կոտորեցին զաշխարհս, զբերդս և
զքաղաքս: Իսկ թագավորն վրաց և իշխանք աշխարհիս փախը-
տական լինին: Եւ յետոյ իջանէ Աւագն ի Կայկանոյ և երթայ
առ Չարմաղանն և առնէ խաղաղութիւն» 1):

Կիրակոս Գանձակեցին, որը դեպքերին ակնատես է եղել,
Ավագին՝ մոնղոլներին հանձնվելու մասին ավելի մանրամա-
սին տեղեկութեան է տալիս: Նա գրում է, որ երբ մոնղոլները,
կոտորելով ժողովրդին և կործանելով շատ քաղաքներ, մտան
վրաց մայրաքաղաք Տփլիսը (Թրիլիսի), բոլոր հայ-վրացական
ֆեոդալները, զբանց թվում և վրաց թագուհի Ռուսուդանը, փա-
խուտարի դիմեցին, իսկ Ավագը մնում է իր մարդկանցով շրջա-
պատման մեջ և ամբանում «ի բերդն ամուր, որ կոչի Կայան,
եկին և ամենայն բնակիչք զաւառին, ամբացան և նոքա շուրջ
զբերդան» 2): Մեծաքանակ զորքով մոնղոլական բանակը Ի-
սուլատա զորավարի հրամանատարութեամբ պաշարում է բեր-
դը: Բայց սրովհետև ամեն կողմից մոնղոլների հարվածներից
տեղի ֆեոդալները պարսութեան էին կրել և մոնղոլական զոր-
քերը շրջապատել էին Ավագի բերդը, այդ պատճառով դրու-
թյունը ծանր էր: Բացի այդ, Իսուլատա զորավարը մի քանի
անգամ պատգամավորներ է ուղարկում Ավագի մոտ — «յոէին
պատգամս առ Աւագըն զալ ի հնազանդութիւն ծառայութեան
նոցա և մի երկնչիլ և բազում անգամ յղէին, և զնայն ասե-
ին»: Երկար պաշարումից հետո Ավագը հարկադրված է լինում
հավատալ մոնղոլներին ու հանձնվում է նրանց: Ավագին շատ
լավ ընդունում են և «հրամայեաց նմա (Ավագին Ա. Գ.) նստիլ
քան զամենայն մեծամեծացն ներքոյ, որ նստէին առաջի նո-
րա» 3): Ավագի՝ մոնղոլներին հանձնվելը վճռական նշանակու-
թյուն ունեցավ Կովկասի ֆեոդալների համար, այդ մասին հե-
տաքրքիր տեղեկութեաններ է տալիս վրաց պատմագիրը. նա
գրում է.

«Երբ երկիրը խաղաղվեց և Շահնշահը (Շանշե) Մանդա-
սուր-Թուխուցեալ տեղեկացավ թաթարների (մոնղոլների Ա.

1) Այրիվանեցի — «Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860, էջ 67-69
2) Կիրակոս Գանձակեցի, նույն տեղ էջ 241.
3) Կիրակոս Գանձակեցի, նույն տեղ էջ 243.

Գ.) և Ավագի միջև կնքված հաշտութեան և երկիրն անվնաս պահելու մասին... ինքը՝ Շահնշահը (Շահնշահն) գնաց թաթարներին տեսութեան, սրանք նրան (Շահնշահին) շատ պատվեցին և վերադարձրին իրենց նվաճած Անին շրջակա երկրով... տեղեկանալով սրա մասին, վաճրամ (վարամ) Գաղեցին՝ Զաքարիայի որդին ևս կնքեց հաշտութեան, և սրանով երկիրը խաղաղվեց» 1): Ելնելով վերստի շրջալ նյութերից, կարելի է եզրակացնել, որ Աթաբեկ Ավագը, ինչպես Խորեզմի սուլթան Զալալ-էզ-զինն, այնպես էլ մանղոլական զորավարների ա խաների հետ զիջանադրատեղան հարաբերութեան ներքին ձեռնարկելու մեջ կոպիտաբար քննարկեցին համեմատութեամբ խաղաղ կերպ է կատարել: Աթաբեկ Ավագը իր բոլոր զիջանադրատեղան ընդունակութեան ներքին աչքի էր ընկնում և բոլորի կողմից ճանաչված մեծ զիջանադրատեղ էր: Այդ էր պատճառը, որ վրացաց Ռուստեղան թագուհին պատվիրակ է ուղարկում մանղոլ զորավար Զաղասայ Նոյինի մոտ, «...Ավագը:—զրում է վրաց պատմագիրը:—որին Ռուստեղան թագուհին (թագուհին) ամիրսարատը բութեան փոխարեն Աթաբեկ էր նշանակել, ուղարկվեց Զաղասայ Նոյինի մոտ...: Ավագը և Խորեզմի սուլթանն առաջիններն էին, որ ուղարկվեցին թաթարների (մանղոլների Ա. Գ.) մոտ» 2):

Միայն վրաց Ռուստեղան թագուհին չէր, որ գնահատում էր Ավագին և նրան օգտագործում իր զիջանադրատեղան ա քաղաքական նպատակները համար: Մանղոլները նույնպես ճանաչեցին և գնահատեցին նրան: Այդ էր պատճառը, որ մանղոլները, որոշ ժամանակից հետո, որոշեցին Ավագին ուղարկել մեծ խանի մոտ:

«Իբրև լակր գայն, —զրում է կիրակոս Գանձակեցին, — մեծ արքայն, սիրով ընդունե գնա, աայր նմա և կին ի թաթար ազգէն, և ուղարկելը գնա յիւր աշխարհն. գրէր և աւ զօրավարն իւր առ ի ձեան նորա զիւր աշխարհն, և նովաւ նուաճել զամենայն արստամբսն, որ եղև իսկ» 3):

Ավագը, ըստ վրաց պատմագրի, որը առաջինն էր ուղարկվել մանղոլներին մեծ խանի մոտ 4), ոչ միայն կարողանում է

1) Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ նույն տեղ էջ—55
 2) Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ նույն տեղ էջ—56
 3) Կիրակոս Գանձակեցի—նույն տեղ էջ—249
 4) Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, նույն տեղ էջ 56:

իր վրա գրված պարտականութեանները կատարել, այլ մեծ պատվի է արժանանում մեծ խանի կողմից, վերականգնեցնում է իր ֆեոդալական իրավունքները և հետևել մի մանղոլստե՝ խանից իր համար նվեր է բերում:

Ըստ վրացական պատմագրերի, Աթաբեկ Ավագը մանղոլների թագավորանիսա Կարախորումում մնացել է հինգ ամիս: Ավագի հետ են եղել վրաց թագաժառանգներ Երկու Դավիթները՝ Ռելուն Դավիթը և Նարին Դավիթը 1): Պարսիկ պատմագիր Ռաշիդ-է-Գ-Իննը նույնպես հարցրում է այդ մասին 2): Իսկ հայտնի ճանապարհորդ Հովհանն զե Պլանո-Կարպինին ինքը նրանից անձամբ տեսել է մանղոլների թագավորանիսա Կարախորումում և ակնատես է եղել այն պահանջներին, որ ներկայացնում էին վրաց թագաժառանգները: Այդ խնդիրները վերաբերյալ Հովհանն զե Պլանո-Կարպինին ընդարձակ տեղեկութեաններ է առլիս 3): Հետաքրքիր տեղեկութեան է առլիս նաև Ստեփաննոս Օրբելյանը: Վրաց թագուհին այնքան էր հավատարիմ ճանաչել Ավագին, որ մահից առաջ «...Գրեաց զիր կտակի առ իշխանն Աւագ, և յանձնեաց ի նա զօրդին, եթէ զարձցի ի Դանէն: Իսկ նոցա գնացեալ առ Դանն Գիւուզ, (Գույուզ) և նա սիրով ընկալաւ զնոսա» 4):

Ավագը ոչ միայն զիջանադրատեղեանն ապարեզում բացառիկ հաջողութեաններ անեցավ, այլև նա առաջինն էր այն քաղաքական գործիչներից, որը պայքարի մարտական գրոշ բարձրացրեց ընդդեմ բարբարոս մանղոլական բռնակալների: Այդ էր պատճառը, որ Կոպիտա մանղոլ տիրակալները, հատկապես Բուզան, միշտ «Ի մա ի իւրում խորէր նմա ի շարութիւն գտանել ի զիւոյ ժամանակի կատարել զկամս շարութիւն» 5): Չնայած մանղոլ տիրակալներին շարամտութեաններին, որ Ավագին վնասեն, բայց և այնպես նրան չկարողացան

1) Վրացական տեքստը վերցված է ակադեմիկոս Բուսսի Պետրուրգի 1849 թվի Քրանսերեն թարգմանութեանից, որակը հրատարակված է նաև վրացերեն տեքստը: Տես էջ 378:
 2) Ռաշիդ-է-Գ-Իննը—նույն տեղ էջ 248:
 3) Պլանո-զե Կարպինիի պատմագրութեան հին Ֆրանսերեն օրիգինալ տեքստը գեղեզված է Պիեռ Բերթերոնի վերը հիշված աշխատութեան մեջ—տես էջ 55:
 4) Ստեփաննոս Օրբելյան—նույն տեղ էջ 421:
 5) Կիրակոս Գանձակեցի նույն տեղ էջ 299:

ընկճել և իրենց ենթարկել, նա երկրորդ անգամ փախավ մեծ խանի մոտ և ավելի ամբաստանեց իր գերբերը և մեծ փառքով ու իրավունքով վերադարձավ հայրենիք:

«Նւ իրրն եկն Աւագն ի զօրն, իսկոյն էհաս հրաման ի խաղանէն առ զօրսն իւր, զի մի ոք իշխեսցէ չար ինչ առնել Աւագին, և թուղթ առ Աւագն, և պարգես նմա, գալ համարձակ և մի երկնչիւր: Ապա մեծարանս արարեալ նմա, հանին արտաքս ի զօրէն զարսն՝ որք կամէին սպանանել զնա...»¹⁾:

Ավագը ոչ միայն հայ, այլև վրաց ժողովրդի քաղաքական ու զինանազխական գործողությունների բնազավտուում անփոխարինելի գործիչ էր: Սա երկար ժամանակ պայքար էր մղում Կովկասում ստեղծված մոնղոլների զաման տիրապետության դեմ:

Այդ պայքարում ոչ ոք չկարողացավ Ավագին վնասել, նա մեռավ իր մահով և նրան մեծ փառքով թաղեցին իր հոր կողքին:

«Մեռավ Աւագն որդի Իւանեի և թաղեցաւ ի սղնձավանքն ընդ հօր իւրում, այր անագան և սրտերազմասէր և սգոթական»²⁾:

Բացի Ավագից, մոնղոլ նվաճողների հետ սերտ փոխհարբերության մեջ էր մտել նաև Հասան Զալալը, Սաչենի իշխանը: Չնայած սա Ավագի մեծությունը չունի, որովհետև Ավագը ոչ միայն հայ ժողովրդի մոնղոլական շրջանի զինանազխության հետ է կապված, այլև նրա զինանազխական և քաղաքական գործողությունները ուժեղ կերպով կապված են նաև վրաց կղբայրական ժողովրդի, նրա զինանազխական ու քաղաքական խնդիրների հետ: Այնուամենայնիվ Հասան Զալալը իր շրջանում, որպես Սաչենի խոշոր ֆեոդալներից ամենաուժեղը, հայ-մոնղոլական զինանազխական խնդիրների կապակցութեամբ իր արժանի տեղն ունի: Հայ աղբյուրները նրան զանազան բարձր տիտղոսներ են տալիս, անվանելով «Տեր Սաչենոյ», «Մեծ իշխան», «Իշխանաց իշխան» և այլն:

Երբ մոնղոլական բարբարոս հրոսակախմբերը, կործանելով Մեծ Հայքի անվանի և արդյունավետ քաղաքները, մոտեցան

Սաչենի գավառին, այդ ժամանակ Հասան Զալալը իր մարդկանցով փակվեց Սախանա ամրոցում և այնտեղից կազմակերպեց համառ ու երկարատև դիմադրություն: Հասան Զալալի համարձակության մասին հարուստ տեղեկություններ են տալիս հայ մատենագիրները¹⁾: Այդ էր պատճառը, որ մոնղոլական զորքերը, երկար ժամանակ շրջապատելով Հասան Զալալի Սախանա բերդը, չկարողացան վերցնել և որոշում են զինանազխական հաշտ ձանադարնով գործը վերջացնել: Հասան Զալալը հեշտութեամբ չէր հանձնվի մոնղոլներին, նրա շատ զանազան փորձեր պատճառը Աթաբեկ Ավագն էր: Ավագի՝ մոնղոլներին հանձնվելը և նրան մեծ խանի մոտ ուղարկելու լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Կովկասում: Երբ Ավագը, մեծ փառքի արժանացած, խանի կողմից վերադառնում էր հայրենիք, մյուս ազգեցիկ ֆեոդալները որոշում են հետևել Ավագի օրինակին. «Եկին ի հնազանդութիւն ծառայութեան նոցա Շահնշահ՝ որդի Զաքարէի, և Վահրամ իշխանն, և սրբին իւր Աղպուգայն, և Հասան, որ Զալալն կոչէին, իշխան կոչմանցն Սաչենոյ, և այլք բազումք»²⁾: Հասան Զալալը գուրս է գալիս իր ամրոցից և մեծ նվերներով գնում մոնղոլ հրամանատարի մոտ, հայանելով իր հնազանդությունը: Մոնղոլ խաների հետ բանակցությունների ժամանակ նրան առաջարկում են, որ նա իր մարդկանցով մասնակցի մոնղոլական հետապարշավանքներին դեպի արևմուտք: Ընդհանրապես այն բոլոր երկրները կամ առանձին ֆեոդալները, որոնք որոշ զինանազխական հարաբերության մեջ էին մտնում մոնղոլ տիրակալ-

1) Կիրակոս Գանձակեցի, Մոսկվայի հրատարակություն (տես Կիրակոս պատմագիր, ի Մոսկուա 1858, էջ 234); Արսղեմիկոս Հ. Ա. Սրբեյին ընդարձակ աշխատանք է գրել Հասան Զալալի մասին և հրատարակել Պետերբուրգում 1909 թվին (տես „Гасан Джалал—князь Хаченский“, изд. Акад. Наук. СПб, 1909 № 6, IV серия, стр. 430). Այդ մասին տես նաև Գարեգին Հովսեփյանի հայտնի աշխատանքը «Պաղարկյանցները...», էջ 39: Բայց ամենից հեղինակավոր և ստուգված աղբյուրը, բոլոր պատմագիրների հետ համեմատած, հանդիսանում է Կիրակոս Գանձակեցին, որը առձանը սեռապես է Հասան Զալալին և նրա հետ մոտիկ փոխհարաբերության մեջ է մտել: Կիրակոս Գանձակեցին Հասան Զալալի մասին խոսում է ամենայն մանրամասնությամբ և հանգամանորեն: Այդ պատճառով էլ նրա հաղորդած բոլոր տեղեկությունները հիշյա են և հաստատվում են արձանագրություններով:

2) Կիրակոս Գանձակեցի, էջ 249:

1) Կիրակոս Գանձակեցի նույն տեղը էջ 252:

2) Վարդան Վարդապետ նույն տեղը էջ 194:

ների հետ, պարտավորվում էին՝ նախ հնազանդվել, երկրորդ՝ հարկ տալ և երրորդ, որ ամենակարևորն է, իրենց հեծյալով և պարենամթերքով մասնակցել այն արշավանքներին, որ կհրամայեր մոնղոլների վերադաս իշխանությունը: Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Մաղաքիա Արեղան: Նա, խոսելով մոնղոլների վերաբերմունքի մասին գեղի հայ-վրացական ֆեոդալները, գրում է.

«Յետ այսորիկ յորժամ իմացան իմաստուն իշխանքն հայոց և վրաց, թե աստված է տուել զօրութիւն և յաղթութիւն նոցա առնուլ զարշարնս մեր: Ապա գործ և սէր կապել զնացին ի հնազանդութիւն տատարին (մոնղոլներին Ա. Գ.) և խոստացան տալ հարկս (յամենայն) մալ 1) և թաղար 2) և ինքեանք հեծելով զնալ ընդ նա ընդ որ և տանիցին» 3): Եվ իրոք Հասան Ջալալը ընդունում է մոնղոլ զորավար Բաշու Նոյինի առաջարկը և նրա հետ միասին մասնակցում է արշավանքներին: Մոնղոլական զորքերը, երբ կոչվում էին Ռումի սուլթանի դեմ, նրանց շարքումն էին գանվում հայ-վրացական իշխանների հետ Հասան Ջալալը, Ավագը և ուրիշները: Հասան Ջալալը գանվում էր Բաշու Նոյինի արքունիքում և վայելում էր նրա վստահությունը: Երբ կիլիկյան հայոց Հեթում թագավորի պատգամավորները եկել էին Բաշու Նոյինի մոտ իրենց թագավորի կամքը հայտնելու, նրանք ոչ մի կերպ չէին կարողանում տեսնվել նրա հետ: Հեթում թագավորի գեսպանները կարողանում են տեսակցվել մեծ հրամանատարի հետ Հասան Ջալալի միջնորդությամբ: Այդ մասին գեղքերին առկանատես և մասնակից կիրակոս Գանձակեցին գրում է, որ Հեթում թագավորը «...Առաքեաց առ նոցա (մոնղոլներին Ա. Գ.) դեսպանս և պատարագս արժանաւորս գնել նոցա ընդնմա ուխտ

1) Մալ—արաբերեն նշանակում է ազրանք, պոյք, հարստություն, ժողովրդական տերմինով նշանակում է նաև խոշոր եղջերավոր անասուն: Այս տեքստում «մալ» նշանակում է հարկի այն տեսակը, որը վերցնում են մոնղոլները անասունով:

2) Թաղար խոսքը, որը մոնղոլական շրջանի հայ պատմիչներից միայն Մաղաքիա Արեղան է հիշատակում, նշանակում է հարկ անելու ամանի չափ: Տվյալ տեքստում դա հարկի մի տեսակն էր, որ մոնղոլները վերցնում էին ցորենով: Թաղար միաժամանակ նշանակում էր ցորենի չափ: Օրինակ, ասում են՝ ավեցի չորս թաղար ցորեն, երևու թաղար դարի:

3) Մաղաքիա Արեղա—նույն տեղ էջ 37:

խաղաղութեան, և նմա կալ նոցա ի հնազանդութեան, որք եկեալ ի մեծ գունն, յանդիման եզեն Բաշու Նույինին, և Ելթիննա Յաթուենին կնոջ Չարմարունին. և այլ մեծամեծ առաջնուայն միջնորդութեամբ իշխանին Ջալալին» 1): Իսկ արշավանքների ժամանակ, պատմագրի վկայությամբ, Հասան Ջալալը ամեն կերպ ազատում էր զերված քրիստոնյաներին, «զրազումս ազատեցին ի գերելոցն որ յայանի, և որ ծածուկ...»:

Իր հավատարիմ ծառայությամբ Հասան Ջալալը չի կարողանում մեկոմացնել իր գավառի գրությունը: Խաչենի երկիրը սխտեմտաիկ ասպատակությունների է ենթարկվում մոնղոլ բարբարոսների կողմից: Հասան Ջալալը մի շարք միջոցառումների է գիմում իր երկիրը փրկելու համար, նա սլաոքաստում է ամեն տեսակի նյութական միջոցներ՝ բավարարելու և հյուրասիրելու բոլոր այն մոնղոլ չինովնիկներին, որոնք գալիս էին նրա կայվածքները այս կամ այն առիթով: Պատմագիրը մանրամասն տեղեկություններ է տալիս Հասան Ջալալի առատաձեանության մասին գեղի մոնղոլ թալանչիները: Բայց այդ միջոցառումները միայն ժամանակավորապես էին կանխում այն ասպատակությունները, որոնց մեջ էր գանվում Հասան Ջալալի երկիրը և ընդհանրապես ողջ Հայաստանը: Հասան Ջալալի գրությունը հատկապես վստահում է այն ժամանակ, երբ հարկահան Բուզան գալիս է նրա երկիրը:

Հասան Ջալալը երկիրը և իր ֆեոդալական ունեցվածքը փրկելու համար որոշում է զիմել զիվանագիտական միջոցառումների: Այդ նպատակով նա գիմում է Սարգախին, որը լինելով քրիստոնյա, («սնաւ քրիստոնեայ գայէկոք և ի շափ հասեալ հաւատաց ի քրիստոս և մկրտեցաւ» 2)) ընդունում է Հասան Ջալալին և նրան ներկայացնում է իր հորը: Բատու խանը մեծ պատվով է ընդունում Հասան Ջալալին և նրան հայրենիք վերադարձնում, վերականգնեցնելով նրա ֆեոդալական իրավունքները:

Չնայած Հասան Ջալալը ստացավ Բատու խանից որոշ արտոնություններ, բայց և այնպես կովկասի մոնղոլ կառավարիչները չղաղարեցին նրան ճնշելուց: Ամեն առիթով նրանք Հասան Ջալալին ճնշում էին և թալանի ենթարկում նրա կալ-

1) Կերակոս Գանձակեցի նույն տեղ էջ 269:

2) Կիրակոս—նույնը, էջ 344:

վածքները: Նա հարկադրված է լինում երկրորդ անգամ գնալ Բատու խանի մոտ, բայց զժրախտաբար այդ ժամանակ նա մեռել էր, իսկ նրա սրգին՝ Սարգախը կանչված էր մեծ խանի մոտ նոր նշանակում ստանալու: Հասան Ջալալը, իր սրգի Աթաբեկի և կնոջ Մամկանի հետ միասին, ընկերանում է Սարգախին և 1255 թվին գնում է Մանգոլիա: Այդ ճանապարհորդութան մասին մեզ տեղեկություն է տալիս Հասան Ջալալի ձեռքով գրած արձանագրությունը, որ նա գրել է աստվածաշնչի էջերում: Այդ գրվածքները 1909 թվին ակադեմիկոս Հ. Օրբելին թարգմանել է սուսերեն և ապագրել իր „Гасан Джалал—князь Хаченский“ աշխատության մեջ: Հասան Ջալալը պատմում է, որ ինքը ընտանիքով մնաց Մանգոլիայում հինգ տարի: Կիրակոս Գանձակեցին, որ ականառես է եղել այդ ճանապարհորդությանը, մանրամասն տեղեկություն է տալիս այդ մասին: Երբ 1256 թվին Մանգոլ խանը գիմալսրում էր Բատու խանի սրգի Սարգախին, նոր պաշտոնի նշանակելու համար, նրա հետ գնում է նաև Հասան Ջալալը: «Ընդ նմա (Սարգախի հետ Ա. Գ.) էր և բարեպաշտ իշխան Սաչենոյ Ջալալն, որ երթալ էր ցուցանել զազեոս իւր զոր կրեաց նա յԱրղուն սասիկանէն, որ հաղիւ զերծաւ ի մահուանէն ի սողրելոյ տաճկայն»: Հասան Ջալալը, ըստ երևույթին, ոչ միայն իր Ֆեոդալական իրավունքների մասին է խոսել Մանգոլ խանի մոտ, գրաւ հետ միասին նա բողոքել է Արղունի, որպես Կովկասի մոնղոլների փոխարքայի, ներքին քաղաքականութեան դեմ: Բացի Հասան Ջալալից, հավանական է՝ և Կովկասի ուրիշ Ֆեոդալներ բողոքած լինեն Արղունի իշխանութեան դեմ և խնդրած մեծ խանից, որ նրան կամ պատժի ենթարկի, կամ աշխատանքից հանի: Մեր այս կարծիքը հիմնվում է այն տեղեկությունների վրա, որոնք հաղորդում են ժամանակակից պատմագիրները: Եվ իրոք, այդ ժամանակ Մանգոլ խանը հետ է կանչում Արղունին և նրան բանտարկում: Պարսկական հայտնի պատմագիրը, ղեպքերին ժամանակակից Զուվեինին իր «ժամանակագրություն» մեջ այդ խնդրին հատկացնում է մի ամբողջ գլուխ՝ «Արղուն խանի դրություն մանգոլացուները»: Այդ գլխում պարսկական պատմագիրը Զուվեինին գրում է, որ Արղունը իր հակառակորդների կողմից բաժրասանքի է

ենթարկվել և բանտարկվել 1): Հետաքրքիրն այն է, որ Արղունին ազատում է մի ուրիշ հայ իշխան՝ Սմբատ Օրբելյանը, որը նույնպես եղել է այդ ժամանակ Կարակորումում և զիվանագրական հարաբերությունների մեջ է մտել մոնղոլական խաների հետ: Արղունի և Հասան Ջալալի փոխհարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս 13-րդ դարի հայ խոշորագույն պատմագիր Սաեփաննոս Օրբելյանը: Արղուն խանին կանչել են Կարակորում «վասն մասնեութեան ինչ»: Հասան Ջալալը մենակ չի եղել, որ բողոքել է Արղունի ինչ: Վասն Ջալալը մենակ չի եղել, որ բողոքել է Արղունի բռնակալ իշխանութեան դեմ: Օրբելյանը գրում է, որ «Անինճ բեկ ոմն և Շարափաղին զիւան այսր աշխարհի, կամէին սպանել զԱրղունն և ինքեանք զալ ի տեղի նորա»: Բացի այդ, Արղունի թշնամիները վատ հարաբերության մեջ էին նաև Սըմբատ Օրբելյանի հետ: «Եւ Սեինճ բեկն թշնամի էր Սմբատոյ և կամէր սպանուամբ տանել զնա» 2): Այսպիսով, պարզվում է, որ Արղունի իշխանութեան անկումը սպանողի գրությունների մեջ է գնում Սմբատ Օրբելյանին, որովհետև նա մտախի հարաբերության մեջ էր գտնվում նրա հետ: Դատավարության ժամանակ Սմբատ Օրբելյանը (թե նա ինչ փոխհարաբերության մեջ է եղել Հասան Ջալալի հետ, այդ մասին մենք բուրովին տեղեկություն չունենք) գուրս է գալիս Արղունին պաշտպանելու և ներքում է Արղունին վարկաբեկող այն բոլոր փոստակը, որոնց մասին գրել էին նրա թշնամիները, և բուրովին արդարացնում է նրան: Այդ մասին մեզ տեղեկություն է տալիս Սաեփաննոս Օրբելյանը: Նա գրում է, թե երբ Սմբատ Օրբելյանը ներկայացավ մոնղոլների ինքնակալ Մանգոլ խանին, նրան այնտեղ ճանաչեցին և մեծ հարգանքով ընդունեցին: Եվ որովհետև Մանգոլ խանը անձամբ ճանաչում էր Սմբատ Օրբելյանին, սիրում ու հավատում էր նրան, այդ պատճառով էլ Մանգոլ խանը.

«Կոչէ առ ինքն և ասէ, եկ արքայուն և ծանու ինձ զամենայն որպեսութիւն այսր աշխարհի և զօրաց իմոց: Եվ նա (Սմբատը—Ա. Գ.) կարգաւ պատմէր նմա (Մանգոլ խանին—Ա. Գ.) ապա վասն Արղունին հարցանէ եթէ որպես աւերեաց

1) Զուվեինի պարսկերեն տեքստից մենք օգտվել ենք Գիպսի 1912 թվի Լոնդոնի հրատարակությունից, էջ 242:

2) Սաեփաննոս Օրբելյան—նույնը՝ էջ 413:

զաշխարհն զայն և կախէ զքահանայս և զմին սպանեալ է, պատասխանեալ Մմբատայ արգարացուցանէ զԱրզունն և ամէն և միոյ ստէ զմասնորսն» 1):

Մմբատ Օրբելյանը գատարանի առջ պաշտպանում է Արզունին, իսկ Հասան Ջալալը արզին վերադարձել էր հայրենիք և տեղյակ չէր իր համար վասնզավոր այն սրտումներին, որոնք գործադրեց Մանգու խանը նրա վերադառնալուց հետո: Մանգու խանը բոլորովին արգարացնում է Արզունին և նորից վերականգնեցնում նրա իրավունքները: Արզուն խանը, վերադառնալով Կովկաս և նշանակվելով իր նախկին պաշտանին, չի մտանում իր այն թշնամիներին, որոնք մասնել, կամ բամբասել էին իրեն: Արզունը ամենից դաժան պատժի ենթարկեց Հասան Ջալալին: Բայց Հասան Ջալալը, կորցնելով ամեն տեսակի հույսեր, վրաց իշխանների հետ սպասամբվեց Արզունի դաժան տիրապետութեան դեմ: Նրանք հանկարծակի հարձակվեցին Արզունի կայսրերի վրա և մեծ ջարդ տվին:

«Բայց յանկարծակի, գրում է պատմագիրը, — եկին զսեղ մի հեծելոց ի վրաց և ցուցին մեծ քաջութիւնըս, զի գրագումբս կատրեցին ի զօրաց Արզունին՝ իրրե հուրն բնոց եղեցն ընթացեալ, և ինքեանք գնացին սղջանդամ, և էին արք իրրե չորս հարիւր: Եւ երկուցեալ Արզունին, ոչ իշխէր այնպէս համարձակ մտանել խուզել զվայրսն: Սպա գարձաւ առ հուրուոյն, և նիւթեաց ի սրտի իւրում շարութիւն, և ի կարնս արար զթագունին վրաց՝ զգոնցայն, և զգուտար իւր զՊաշաքն, և զիշխանն մեծ զՇահնշահ, և զՋալալն Հասան զաւրն Սաշենոյ, և զայլս բազումս պատճառանօք պարտուց և հարկի, յուրոց բազում զանձս առեալ, հազիւ զերծան ի մահուանէ: Իսկ զբարեպաշտ և զառաքինի իշխանն Ջալալ՝ նեղէր անհնարին կտանօք» 2): Իսկ ըստ երևույթին բավականին լուրջ ապստամբութեան է եղել ընդդեմ Արզունի իշխանութեան: Բայց Արզունը, զավաճան իշխանների օգնութեամբ և Պարսկաստանից նոր ուժեր ստանալով, կարողանում է դաժան կերպով ճնշել այդ ապստամբութեանը, որին մասնակցում էր նաև Աթաբեկ Ավագը: Նրան Արզունը ձգտում էր բանտարկել և ոչնչացնել: Բայց այդ չհաջողվեց: Այդ բոլորի վրեժը Արզունը Հասան Ջա-

լալից լուծեց: Արզունը նրան անմիջապես բանտարկեց և երկաթե օղեր անցկացրեց սարերը: «Ենդեալ ժայտ ի պարանոց նորա և երկաթ յոտս նորս»: Չրափականալով այդ բոլորով, Արզունը սրտում է ֆիզիկապես ոչնչացնել Հասան Ջալալին: Իմանալով այդ անասնելի սրտման մասին, Հասան Ջալալի կողմնակիցները մարդիկ են մեջ գցում նրան մահից աղատելու համար: Առանձնապես շատ է շարժարվում Հասան Ջալալի դուտար Խուզանը: Նա դիմում է Հուրագու խանի քրիստոնյա կնոջը 1) Տօնգուզ խաթունին: Արզուն խանը, իմանալով, որ կարող են կարգադրել Հասան Ջալալին աղատելու, 1261 թվին մի զիշեր սպանում է նրան:

«Եւ զիտացեալ անօրեն սասիկանին, առաքեաց վազվազակի զահիճս և ի զիշերի ետ սպանանել զսուրբ և զարգար այրըն» 2): Հասան Ջալալը ոչ միայն չկարողացավ պաշտպանել իր պապական ունեցվածքը և ֆեոդալական իրավունքները, այլև կորցրեց իր կյանքը: Չնայած իր դաժան վախճանին, այնուամենայնիվ նա պատկանում էր այն համարձակ հայ իշխաններին, որոնք չկարողանալով զիջանազրտական բարդ հարաբերութեաններով պաշտպանել իրենց երկրի պատիվը, զիմեցին զինքի: Նա սպասամբվեց մանդրական դաժան բանակալութեան դեմ և ինքը զսփեց այդ անհավասար պայքարում:

Բացի Աթաբեկ Ավագից և Հասան Ջալալից, կարելի է խոսել նաև Մմբատ Օրբելյանի մասին, որը նույնպես եղել է Կարսի սուլթանում և նրա գործունեությունը հայ-մանդրական հարաբերութեանների պատմութեան առումնասիրութեան համար ունի կարևոր նշանակություն:

Մմբատ Օրբելյանը պաշտպանում է Օրբելյանների ֆեոդալական տանին, որոնք 12-13-րդ դարերում խոշոր դեր կատարեցին հայ ժողովրդի պատմութեան մեջ: Պատմագիր Սահխանյան Օրբելյանը նույնպես պատկանում է այդ տանին:

Մմբատ Օրբելյանը մանդրակների հետ զիջանազրտական հարաբերութեանների մեջ է մտնում այն ժամանակ, երբ մոնղոլ հրամանատար Սալան Նոյինի զորքերը շրջապատեցին նը-

1) Հուրագու խանի կինը ընդունել էր քրիստոնեություն, այդ պատճառով մահճեկանները թունավորեցին նրան (Օրբելյան 419)

2) Կիրակոս Գանձակեցի—նույնը՝ էջ 375

1) Սահխանյան Օրբելյան—նույնը՝ էջ 414
2) Կիրակոս Գանձակեցի—նույնը՝ էջ 274

բանց ամբոց Հրաշկարերդը: Մոնղոլները, երկար ժամանակ շըր-
ջադասելով այդ ամբոցը, չկարողացան այն գրավել և սրոշե-
ցին զի վանագիրտական հարաբերութեան մեջ մասնել բերգի ար-
բոջ հետ: Այդ մասին պատմողիւր Ստեփաննոս Օրբելյանը զը-
բում է.

«Եկն Ասլանն այն և շըջեցաւ ընդ բերդովն և ծանեաւ,
զի անհնարին էր ի մարդկանէ, ապա իջանի հանդեպ բերդոյն,
և յղէ պատգամաւորս առ նա և սաէ, արա ընդ մեզ սէր, և եկ
առ մեզ, և բազում քարութիւնս դացես ի մէնջ» 1): Էլիզու-
մը 2) համաձայնում է զործը հաշտութեամբ վերջացնել: Էլի-
զումը «սչ ընդիմացաւ բանիցն, այլ քաղցրութեամբ պատաս-
խանեց երգումն և ել ընդ յառաջ նորա բազում ընծայիւք»: Մոնղոլ
հրամանատարը այդ առնելով ուրախանում և նրա հետ
զաշն կնքում. «Եւ տէսեալ զնա Սալանին յոյժ սիրեաց և ընկա-
լաւ զնա, և արար խաղաղութեան»:

Ըստ պատմողիւրների, Մմբաա Օրբելյանը իր ժամանակ-
վա ամենագարգացած մարդկանցից մեկն է եղել: «Ապա արեւ
իշխանութեան նորին եղբայրն իւր ամենաօրհնեալն և զովե-
լին բնակից Մմբաա, որ էր հանձարով մեծ, խորհրդով ուժեղ,
խելօք անմասն, հնարիւք քաղմագեա, բանին աստա և քաղ-
ցըր, լեզուաց հմուտ և ճարտար, ի գատարանի զի վանին ան-
պարանիւ. զի խոսէր լեզուս հինդ՝ հայ և վրաց, սելուր և փար-
սի և զմոնղոլն իսկ» 3):

Մմբաա Օրբելյանը թշնամական հարաբերութեաններն մեջ
էր գտնվում Կովկասի ֆեոդալների հետ: Նրանք ամեն կերպ
նեղութեան էին պատճառում Մմբատին, այդ պատճառով Օր-
բելյանը որոշում է գնալ անձամբ մեծ խանի մոտ և նրա հո-
վանավորութեանը խնդրել: Մմբատը, հանձնվելով մոնղոլնե-
րին, անմիջապես զլխավորում է նրանց նվաճողական արշա-

1) Օրբելյան—նույնը՝ էջ 403

2) Մմբատը Էլիզուսի ազգակիցն է, որի մահից հետո սոսմի իշխանու-
թեանը անցնում է Մմբատի ձեռքը:

3) Ստեփաննոս Օրբելյան—նույնը՝ էջ 405: Ի միջի այլոց մոնղոլների
լեզուն զիտեր նաև Կիրակոս Գանձակեցին, որը, ինչպես ասացինք, եղել է Մ-
մբաա Նոյնի մոտ իբրև թարգմանիչ: Կիրակոս Գանձակեցին իր պատմադրու-
թեան մեջ հիշատակում է 60 մոնղոլական խոսք, որոնք մինչև այսօր, բացա-
ռութեամբ երկուսի, զորք են ամբողջ մոնղոլական ժողովրդական հանրագի-
տութեան մեջ (սես Կիրակոս, նույնը՝ էջ 260)

վանքները գեղի կովկասի քաղաքները: Նա ասածինն էր հայ
ֆեոդալներից, որ մասնակցեց Անի քաղաքի գրավմանը: «Եւ
կայեալ զնա ասաջնորդ զնաց մինչև յԱնի և հնազանդէր զա-
մենայնն» 1): Մմբաա Օրբելյանը, զժողո՛ւրինելով տեղի ֆեո-
դալներից, իր ֆեոդալական սոսմի ամբողջ բախտը կապել էր
մոնղոլ նվաճողների հետ: Այդ էր պատճառը, որ մոնղոլները,
հավանելով Մմբատի նվիրվածութեանը, մեծ հարգանքով են
վարվել նրա հետ. նրան բոլորից շատ են հավատացել և մեծ
օգնութեան ցույց տվել:

Մմբաա Օրբելյանը թանկարժեք նվերներով զնաց մեծ
խանի մոտ: Երբ նրան տեսան, հարցրին, թե ինչ ազգից ես,
Մմբատը «սաէ հաւատով քրիստոնեայ եմ և ազգաւ հայ»: Սըմ-
բատին իր զի վանագիրտական ընդունակութեաններն և ճար-
տար լեզվի համար շատ սիրեցին: «Հաւատաց նմա, զի բարձ-
րացան քան զամենայն զբան աւազանին և հրամայեաց առ
Մմբատայ զօր ինչ է խնդրեսցէ: Եւ է սուսն նման փայլեաց
տակի որ էր տախտակ անելով զանուն Աստուծոյ և զարբայի
զրեալ յինքեան և այս էր մեծագոյն պատիւ նոցա, և զրեն
հառլիս որ է հրաման, զօր մեք սիցել կոչում» 2): Անա թե
ինչու նրա ազգակից, պատմողիւր Ստեփաննոս Օրբելյանը,
որը գրել է այդ շըջանում, այդպես մեծ հարգանքով և պատ-
կասանքով է խոսում բարբարոս մոնղոլների մասին, նրանց
անվանելով «բնութեամբ օրինացն զարգարեալք, տակցոյք ազ-
տակի զիջութեանց և ամենայն վնասակար զործոց, արդարա-
միտք առ միմիանս միամիտք և հնազանդք ասաջնորդի իւ-
րեանց, իրաւարարք և իրաւազատք, իսկ բարութք ազբատք և
ընչաքայցք, նեղիչք և կեղեքիչք մարդկան, պատկերով յոյժ
զեղեցիկք և լերկք բոա կանացի զկմաց, և ծանօթք քրիստո-
սեան հաւատոյ, և յոյժ սիրոյք քրիստոնէից, յազեպանս կորո-
վիք և յամենայն պատերազմս յոյժ հնարւորք» 3): Ոչ մի պատ-
մազիւր, թե պալատիկներից և թե հայերից, այսպիսի դրական

1) Օրբելյան, էջ 404

2) Արևելագիտ Սեն Մարտենի կարծիքով Ստեփաննոս Օրբելյանի կող-
մից մոնղոլների «զեղեցիկ» ընթացիկը բացատրվում է նրանով, որ նա
չվստում է մոնղոլներին իրանական ժողովուրդների հետ, որոնք ծառայում
էին մոնղոլներին,

3) Օրբելյան, —նույնը՝ էջ 401-402:

գնահատական չէր տվել մոնղոլ բարբարոսների մասին: Հասկանալի է, որ Մմբառ Օրբելյանը, պատկանելով ախրապետոս գասին, մոնղոլների միջոցով վերականգնեցրեց իր ֆեոդալական իրավունքները, և այդ պատճառով էլ նրա տված գրական գնահատականը սուբեկտիվ բնույթ ունի: Մմբառ Օրբելյանը երկրորդ անգամն է գնում Մոնղոլիա մեծ խանից օգնություն խնդրելու, բայց նրա գնալը անձնաշահ նպատակներ էր հետապնդում, այդ պատճառով մենք կանց չենք առնում նրա հետագա փոխհարաբերությունների վրա, որովհետև նրա այդ գործողությունները ոչ մի պատմական կամ քաղաքական նշանակություն չունեն նախ ժողովրդի, և ընդհանրապես Անդրկովկասի ժողովուրդների համար: Հայ մատենագիրները, սղբալով մոնղոլ բարբարոսների ավերածությունների վրա, միաժամանակ թվում են այն բոլոր հայ գործիչներին, որոնք իրենց քաջությամբ և սիրազործություններով բարձրացնում էին հայ ժոժովրդի և իրենց քրիստոնեական կույտության պատվը: Բացի մեր հիշատակած զվամնագիտական գործիչներից, կարելի է հիշատակել Սուխու Բուզային, վրաց Դեմիտր թագավորին, երկաթը փռի գործնող Պաօ իշխանին, որը 1258 թվին մոնղոլական պատվիրակության հետ գնաց մտավ Բաղդադ քաղաքը և առաջարկեց Բաղդադի խալիֆին անձնատուր լինել մոնղոլներին: «...և գրաջն Պաօ և գայրս տաքեաց զեպանս առ խալիֆայն պլ նմա ի հնազանդութիւն, և հարկիլ զանին» 1): Բավական է միայն Պաօ իշխանի այդ համարձակ գործողությունը, որպեսզի նա զատի մոնղոլական շրջանի խաչոս զիվա նազեանների շարքին:

Նույն կարգի գործիչ է եղել նաև Դոսիան Հասանը: Ըստ արձանագրություն, նա «այնպիսի գործարք էր և տղատիչ նեղելոց, ինչպես քրիստոսի Ս. խաչն»: Գեղարքունեաց Ղրխուլուսի գյուղի 1297 թվի արձանագրության մեջ նրան «իշխանաց իշխան» ախարս է արված: Եվ վերջապես կարելի է հիշատակել Գաղի իշխան Վահրամին, որը հնչագրություն կատարում էր զիվանագետի պարտականություն: Նա մոնղոլների զլխավոր հրամանատար Բաչու Նոյինի կարգադրություններ, հարյուր հույուց բաղկացած պատվիրակության զլխին անցած, ձեռով մըս

1) Կիրակոս—նույնը՝ էջ 365

նում է Կեսարիա և առաջարկում նրա իշխանավորին՝ անձնատուր լինել: Այդ մասին զեղբերին մասնակից և ակնատես Մաղաքիա Արեղան գրում է.

«Վահրամ զաէրն Գաղայ հրամանաւ Բաչու Նոյինին և այլ ամենայն զլխաւորաց Տաթարին, և ետուն զինի Վահրամայ Տաթար զլլխաւոր մի այլ, հարիւր ձիաւորով, և յուզարկեցին զնա մեծ սխասթով ի Կեսարիայ» 1):

Բացի վերոհիշյալ քաղաքական ու զիվանագիտական գործիչներից, կարելի է հիշատակել ևս մի շարք ուրիշ հայ-վրացական գործիչներ: Բայց այդ բոլոր զիվանագիտական հարաբերությունները մոնղոլ նվաճողների հետ նույն բնույթն ունեն և իրենցից առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

* * *

Այժմ մենք կանցնենք կրիկյան հայոց թագավորների և ֆեոդալների զիվանագիտական ու քաղաքական հարաբերությունների ուսումնասիրությունը, որն իր պատմական արժեքով գերազանցում է այն բոլոր հարաբերություններին, որոնք անցի են ունեցել Կովկասի ֆեոդալների և մոնղոլ խաների միջև:

Հայկական Կրիկիան ուներ իր առանձնահատուկ պատմությունը: Կրիկիայում հայեր եղել են դեռ Տիգրան մեծի օրոք: Հայ պատմագիրները դեռ 5-րդ դարում հիշատակում են կրիկյան հայերի մասին 2): Ընդհանրապես Կրիկիան Փոքր-Ասիայի ամենահին և ամենանշանավոր շրջաններից մեկն է եղել: Գանվելով Միջերկրական ծովի ափին և լինելով Անատոլիան թերակղզու մի մասը, նա կապում է եվրոպան Ասիայի և Աֆրիկայի հետ: Հայերի՝ զեպի Կրիկիա զաղթի մասին թովմա Արժրունին իր «Պատմութիւն տանն Արժրունեաց» աշխատության մեջ գրում է.

«Տէր Բրիտաափոր կաթողիկոս (515—522) զրէ առ կողմանս Ասորեստանի զղացուցանելով մի խառնիլ ընդ Նես-

1) Մաղաքիա արեղա—նույնը՝ էջ 18

2) Մովսես Պարենացի—«Պատմութիւն հայոց»—Թիֆլիս, 1913 թ.

տորականան»¹): Իսկ պատմագիրները վկայություններ, արար-
 ների արբանյակության ժամանակ հայերի թիվը կրկնակի չափով
 աճեցան է մեծանում, որ Մաշիկ կաթողիկոսը 972 թվին Ա-
 նիում հարկավոր է համարում «ձեռնադրել եպիսկոպոսունս
 յԱնախոք Ասորոց և ի Տաշտոն կրկնակիցուց»²): Բայց հայերի
 դադիր գեպի կրկնակի սկսվում է ավելի ուժեղանալ և մասսա-
 յական բնույթ կրել հատկապես սելջուկների դաժան արարե-
 անությունների օրոք: Մեծ Հայքի բնակչության համարյա թե մեծ
 մասը թողեց հայրենի երկիրը և գնաց օտարություն: Մոշոր
 հայ ֆեոդալները փոխում են իրենց ունեցվածքը, գյուղերն ու
 քաղաքները, իսկ փոխարենն ստանում չնչին վարձատրություն
 կամ առանձին կալվածքներ: Արիստոսանը Անին վերցնելու ժա-
 մանակ «Գաղիկ թագավորն կարաց նեղեալ յերկիւզէ՝ թուր-
 քացն աայ զհայրենիս իւր ի յոյնս և առնու զՄամնդա զԼա-
 սիսա, զԱմասիա, զԿոմանայ և զԵւստատինս հարիւր, որ է գեօ-
 դեան»³): Իսկ Մաթևոս Ուսանեցին, հաստատելով այդ տեղե-
 կությունները, գրում է. «Եւ անդ եղեալ Գաղիկ աղաաօք իւ-
 ռովք և թուեալ զառնն հայրենաց»⁴): Հասկանալով հունաց
 կայսրին գրած նամակի սոցիալական խոր բովանդակություն-
 նը, Արիստակես Լասարիվերացին այն համարում է «Հայոց
 կորստեան զիր և նամակ»: Այդ նամակը զարձակ Գաղիկ 2-րդ
 թագավորի կորստյան հիմնական պատճառը: Կոնստանտին Մո-
 նոմախը զրկեց Գաղիկ 2-րդին իր ժառանգական կալվածքնե-
 րից, իսկ փոխարենը ավելի «Ջկալան-պեղաան և զպիզու» կամ,
 ինչպես Վարդան Վարդապետն է ասում, «զկալան պաղաան և
 զպիզու»:

Պատմագիրները հազարավոր տեղեկությունները հաստատ-
 փում են օտար աղբյուրների կողմից: Հիշված քաղաքների տե-

1) Բացի թովմա Արծրունուց, այդ մասին հիշատակում է նաև Հով-
 հանես Իրասխանակերացին: Նա ասում է. «Վերեթագործ ալազգիլն յաղա-
 հովս կացալք, յերկիւզէ քաջացն զօրաց և զմնացեալ ընտինիս հրակիրացն
 գերի առեալ ամէլին ի Դուին քաղաք և անտի յուզարկեալ տանէին ի Դամասկ»:

2) Այդ մասին տեղեկություն է տալիս պատմագիր Ասողիկը. տես Ասո-
 ղիկ, էջ 258:

3) Վարդան Վարդապետ, նույնը, էջ 136:

4) Մաթևոս (Մաթևոսի Ուսանեցուց «ժամանակագրություն», Վա-
 րդապետ, 1908, էջ 181):

զը հայանի է: Իրոք որ Գաղիկ 2-րդ թագավորը ստանում է
 Կապադոկիայի մոտ ընդարձակ կալվածքներ: Իրանց մի մասը
 գեո երկար ժամանակ վայելում էին Գաղիկի ժառանգը, ու-
 ռոնք սպանվեցին բյուզանդական կայսեր ձեռքով, իսկ նրանց
 կալվածքները կայսրությունը անցան: Շնորհիվ Մեծ Հայքից
 դադիված հայերի, ծաղկում և ընդարձակվում են կրկնակի չափով
 հայկական նոր շրջաններ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ
 են զբաղում Ռուբեն իշխանի ֆեոդալական կալվածքները:

Ռուբենի հովանավորություն տակ հավաքված հայ զաղթա-
 կանները, բնակություն հաստատելով Տալրոսի բարձրավանդա-
 կում, կազմակերպվում և հիմք են դնում կրկնակի հայոց թա-
 գավորությունը, որի հիմնադիրը, Վինչպես ասացինք, հանդիսա-
 ցավ Բագրատունյաց զինաստիայից Ռուբենը (Ռուբեն I):
 Նրա անունով էլ զինաստիան կոչվեց Ռուբինյան (1080-1375):
 Այդ նոր կազմակերպված կրկնակի հայկական թագավորու-
 թյան սահմանները կազմում են Տավրոսյան լեռնաշղթան, սրը
 կրկնակի հայաստանը բաժանում է փոքր-ասիական մյուս
 երկրներից: Նրա հարավային սահմանը Միջերկրական ծովն է,
 իսկ հարավ-արևելյանը՝ Ասորիք: Ելնելով իր աշխարհագրական
 դիրքից, կրկնակի հայաստանը իր դոյուքության երեք հարյուր
 տարվա ընթացքում վճռական դեր կատարեց: Կրկնակի հայոց
 թագավորությունը իր ամենագարգացած աստիճանին հասավ
 հայոց թագավոր Լևոն 2-րդի օրով: Կրկնակի հայոց թագավոր-
 ներից նա առաջինն էր, որ արեմտյան եվրոպական պետու-
 թյունների կողմից պսակվեց և ճանաչվեց որպես թագավոր կի-
 լիկյան հայոց պետություն: Նա բարձր կողմերով տարբերվեց իր
 նախորդ թագավորներից— իր ստեղծագործական աշխատանքնե-
 րով, իր կազմակերպչական ընդունակություններով, որպես պե-
 տական կենտրոնական իշխանություն հիմնադրի: Նրա մասին
 գրված է. «Լևոն Բ Ռուբենեան հարստութեան ամենէն զօրա-
 ւորը և առաջին գրամ հասանողն է, իր ժամանակը միայն
 ինքնիշխան տիրութիւն էր, և կրնանք հաստատել, որ առանց
 զրացի կամ Նեոսվոր ազգաց հարկատու ըլլալու, իր թագաւո-
 րութիւնն ընդարձակեց ու կառավարեց»¹): Նրա բաց թողած
 գրամների վրա մեն կարգում ենք «Լևոն թագաւոր», «ԹԳԲ
 ամենայն հայոց», «Լևոն թագավոր հայոց» և այլն:

1) «Իստուրութիւն աւերինեան զրամոց», Վիննա—1892, էջ 10-16.

Նրա մահից հետո, արու գավակի չունենալու պատճառով, իշխանութիւնը անցավ նրա միակ ազնկան՝ Զարեկին կամ Իգարեկին: Եվ որովհետև Լեոնի ազնկիւր փոքր էր, այդ պատճառով խնամակալի պարտականութիւնն անցավ Ավագ պարոն Կոնստանտինին 1): Տեղի իշխանների միջնորդութեամբ, 1222 թրվին, թագուհին ամուսնացավ Անախորի իշխանի սրբի Բոհմունցի հետ, որը ամուսնանալուց հետո հայոց թագավոր հռչակվեց: Նա խոսք էր ասել, որ կաշառարանի հայկական կենցաղը ու սովորութիւնները: Անախորի թագաժառանգին հայոց թագավոր դարձնելու առթիվ հետաքրքիր տեղեկութիւն է ապրիս ժամանակակից պատմադիր Միխայիլ Աստրին: Նա գրում է, որ հայ իշխանները, իրար չհավանելով և իրար դեմ պայքարելով, սրուշեցին օտարին իրենց թագավոր հրավիրել:

«Իսկ իշխանացն Հայոց բազում անմիարանութիւն լինէր վասն գնելոյ թագաւոր, զի ոչ հաւանէին միմեանց, և ապա ի մի կամս եկեալ ընտրեցին զսրգին բրինձին Անախորս թագավորէ ցուցանել, զոր և արարին իսկ, և ետուն զգուտար թագաւորին Հայոց Լեոնի նմա ի կնութիւն, և թագաւորեցուցին ի վերայ Հայոց ի թուին Հայոց ՈՂԲ (672), և անվանեցին զնա Ֆիլիպ թագավոր» 2):

Բայց նոր թագավորը ոչ թե վարվում է հայերի սովորութեան և կրոնի հետ ըստ իր խոստման, այլ նա աշխատում է լատինիզացի սյրի ենթադրել ժողովրդին և, որ ամենակարեւորն է, գաղանի սկսում է գողանալ հայոց թագավորութեան թանկարժեք հարստութիւնները, անգամ Լեոն թագավորի թագը և Անախոր է ուղարկում: Այդ մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին: Նա գրում է, որ երբ Ֆիլիպը սկսեց թագավորել, «Իբրև եկաց յարքայութեանն զամս շորս, խաբեաց զնա հայրն իւր, և աւ ի նմանէ զթագն Լեոնի արքայի, և զպաղատան արքունական, զոր յերեւելի յաւուր կանգնէին, և այլ գանձս սակոյ և արծաթոյ: Իբրև տեսին իշխանքն՝ եթէ ոչ է միամիտ այրն յարքայութեան անդ, ըմբռնեալ զնա արարին յարգելս, մինչև բերցէ զթագն և զգանձն՝ զոր տարաւ, իսկ հայրն նորա ոչ ետ և ոչ դմի, այլ և ոչ շինել ինչ կարաց սրբոյ իւրում և թողին զնա անդ, մինչև ի նմին մեռաւ» 3): Ֆիլիպի մահից հետո

պարոն Կոնստանտինը, համաձայնութեամբ վերցնելով հայոց կաթողիկոսից և մյուս իշխաններից, իր 4-րդ սրբուն՝ Հեթումին թագավոր հայաարարեց: Միաժամանակ նա առաջարկեց Զարեկին՝ կին գտնալ նորընտիր Հեթում առաջին թագավորին: Բայց Զարեկը չի համաձայնում և փախչում է Սելեվկիա: Պարոն Կոնստանտինը, որը Լեոն 2-րդ թագավորի օրոք կրիկիյան գորքերի գլխավոր հրամանատարն էր, սպարապետը (Գունդատապը), գորքով գնում է և շրջապատում Սելեվկիա քաղաքը և հարկազրում տեղի իշխանութեանը՝ Զարեկին հանձնելու իրեն: Տեղի իշխանութիւնը, վախենալով Կոնստանտինից, հարկազրված հանձնում է Զարեկ թագունուն:

«Ի թուին Հայոց ՈՂԵ (675) միարանութեամբ ամենայն իշխանացն տուն զԶապել՝ զուտար Լեոն թագաւորին ի կնութիւն Հեթմոյ որդոյ պարոն Կոստանդեայ, և թագաւորեցուցին ի վերայ Հայոց, որ էր աղայ հասակն, և հայր նորա կարգաւորէր զթագաւորութիւնն, որ և արար սէր բնոյ Ալագին սուլտանն և հնազանդեցան նմա՝ աւելով նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն» 1):

Զարեկը, որ սկզբից չէր ցանկանում Հեթումի կինը դառնալ, հաշտվեց նրա հետ և ամուսնացավ: Նրանք նախանձելի ընտանիք կազմեցին, ունեցան բազմաթիվ զավակներ և երկրի կառավարման գործում մեծ փառքի արժանացան: Եվ այդպէս, Հեթում առաջինը գործով կրիկիյան հայոց իշխանութեան թագավորը: Հայ մատենագիրները նրա մասին մեծ գովասանքով են խոսում, անվանելով նրան «Բրիստոնասէր արքա» 2), «Բարեպաշտ թագավոր» 3), «Բմաստուն քրիստոսապատկ», «Մեծահավատ և քրիստոսասէր արքայն հայոցն» 4):

Երբ մոնղոլական զորքերը, մոնղոլ հրամանատար Բաչու Նոյինի առաջնորդութեամբ մոտեցան Ռումին և, ավերելով նրա սահմանները, մոտենում էին Կրիկիային, այն ժամանակ Հեթում թագավորը որոշեց նրանց հետ զաշնակցութեան պայմանագիր կնքել: Հեթում առաջինի պատգամավորները հարուստ

1) Միխայիլ Աստրին, էջ 518, Սմբատը իր պատմագրութեան մեջ գրում է, թե «յանձն առ պարոն Կոնստանտին հայր նորա տալ ամամէ շորքհարիւր հեծեալ»:
2) Մաղաքիա Աբեղա—նույնը, էջ 16:
3) Մաղաքիա—նույնը, էջ 31:
4) Կիրակոս Գանձակեցի—նույնը՝ էջ 350

1) Սկզբից Բեդենդն էր Սիբ Աղամբ, որին թուրքերը սպանեցին:
2) «Ժամանակագրութիւն տեսան Միխայիլի Աստրին պատմաբարքի», Երուսակեմ—1871, էջ 517:
3) Կիրակոս Գանձակեցի,—նույնը՝ էջ— 178.

նվերներով ներկայանում են Բաշու Նոյինին, Հասան Ջալալի միջամտութեամբ 1): Մոնղոլները, ընդունելով հայոց Հեթում թագավորի առաջարկը, պայմանագիր են կապում և խոսք են առնում ձեռք հասնել հայոց կրիլիկյան թագավորութեանը: Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է առնում ժամանակի պատմագիրը, նա գրում է.

«Յայնժամ արքայն Հեթում խորհրդածեալ զխաղաղութիւն աշխարհիս հայոց՝ յուզի անկեալ գնաց առ ազգն մուղալ, զոր թաթարն կոչեն, և յուխտ մտեալ ընդ նոսա, ըզմշանջնաւոր խաղաղութիւն աշխարհի իւրոյ ի նոցանէ» 2): Ընդունելով Հեթում թագավորի առաջադրած պայմանները, Բաշու Նոյինը ուղարկում է իր զեապաններին նրա մոտ և առաջարկում է իր պայմանը: որ բավական ծանր էր Հեթում թագավորի համար: Մոնղոլ հրամանատարը պահանջում է Հեթում թագավորից՝ նրա մոտ փախած Իկոնիայի սուլթանի մորը, կնոջը և ազջիկներին հանձնել իրեն: Իրոք, սուլթանի պարտվելու ժամանակ նրա մայրը, կինը և ազջիկները փախել էին Կրիլիկիա ապաստարան գտնելու, մոնղոլների ձեռքից ազատվելու համար:

«Եւ թաթարն,—գրում է Սմբատը,—յղարկեց ի հետ ի Հեթում թագաւոր, թէ տուր զփախստականդ, թէ չէ քո ամեն սէրըն, որ հետ մեզ գրէր նա սուտ է: Նա (Հեթումը Ա. Գ.) վախեցին որ թաթարն չլցուէր յերկիրս առէին: Նա սխալաւ սուլթանն Բայի Սոսրով շահն և ամեն Տաճկուէք, ժողովեաց հեծեալ, և առաջնորդութեամբ պարոն Կոստանդնույ Լամբրոնի տիրոջն 3), մտաւ ընդ Պապաոսին լեառն ի վայր, ու այրեաց

1) Կիրակոս Գանձակեցի,—նույնը՝ էջ 269
2) Մամեկ Անեցի, էջ 221

Նույնը մինք կարգում ենք «Նշխարք մատնագրութեան հայոց», էջ 36. Յայնժամ արքայն Հեթում խորհրդածեալ զխաղաղութիւն աշխարհիս հայոց, յուզի անկեալ գնաց առ ազգն մոնղոլ-զոր թաթարն կոչեն և յուխտ մտեալ ընդ նոսա զմշանջնաւոր խաղաղութիւն ի նոցանէ, որ ապականէին զամենայն աշխարհ: Յայնմանէ լցեալ նախանձու պաշտոնեայքն մահմետի, ամենայն աստեք նիւթէին զհինգութիւն ի վերայ հայոց:

3) Տարբերակ է, որ Հեթում 1-ի դեմ սուլթանի հետ միասին վրեժխնդրութեան է գնում հայ իշխան Պարոն Կոնստանտին Լամբրոնացին: Այս իշխանը պատկանում է այն զաղաճան հայ իշխանների շարքին, որոնք ընդունելով լատինական կրոնը և նրանց օրինատացեան, հաճախակի ընդհարման մեջ էին մտնում հայերի հետ: Հայերի հետ միասին Լամբրոնացի իշխանը միշտ դեմ է գուր և կել իր ազգակից հայերին: Այս դեպքումն էլ Լամբրոնի զաղաճան իշխանը միանում է թյուրքերին և մեծ վնաս պատճառում իր հայրենիքին:

զամէնն» 1):

Եվ իրոք, կրիլիկյան հայոց թագավորը, վախենալով մոնղոլների հարձակումից, ավելի իր մոտ թագնված սուլթանի ընտանիքին, որի համար սուլթանն սկսում է ասպատակել կրիլիկյան հայոց շրջանները Պապաոսին: Բայց Հեթումի այդ քայլը իրեն նույնպես գուր չի գալիս: Հեթում թագավորը մեծ զժվարութեամբ է հանձնում ապաստարան փնտրողներին: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ երբ Հեթում 1-ին թագավորի զեապանները ներկայացան Բաշու Նոյինին պայմանագրեր կնքելու, նրանք սերախութեամբ համաձայնվեցին Հեթումի առաջադրած պայմաններին: Բայց «խնդրեցին ի նմանէ տալ ի ձեռս նոցա զմայր Սուլթանին զկին և զզուտար, որք զաղթականութեան սղազաւ անդ փախուցեալ էին 2): Հեթում թագավորը, լսելով մոնղոլների այդ պահանջները, հայանեց իր զայրութիւնը և ցավակցութեամբ, ասելով. «Լաւ էր ինձ եթէ զորդի իմ զԼեոն խնդրեալ էին յինէն, քան թէ գնոսա» 3):

Այնուամենայնիվ Հեթում թագավորը, ելնելով իր երկրի ու ժողովրդի շահերից, հանձնեց իր մոտ փախած և ապաստարան գտած սուլթանի ընտանիքը՝ մորը, կնոջը և ազջիկներին: Ինքնըստինքյան հասկանալի է, որ սերիշ կերպ էլ Հեթում թագավորը չէր կարող վարվել: Մոնղոլների հետախուզութեանն այնքան ուժեղ էր և լավ կազմակերպված, որ նրանք ամեն մի մանրուք գիտէին: Մոնղոլ նվաճողներին հայանի էր կրիլիկյան հայոց փոխհարաբերութեանը նրա հարեան մուսուլմանական պետութեանների հետ: Այդ էր պատճառը, որ երբ կրիլիկյան հայոց թագավորի պատվիրակները առաջին անգամ (1242—1243) ներկայացան մոնղոլների զխաղաղոր հրամանատար Բաշու Նոյինին, նա անմիջապես զաշինք կնքեց նրանց հետ և կրիլիկյան հայոց թագավորութեանը ճանաչեց իբրև իրեն վասալ: Մուսուլմանական պետութեանները, որոնք հաճախակի ասպատակութեաններ էին կազմակերպում հայոց պետութեան սահմանների վրա և կործանում նրանց զեղեցիկ ու արդյունավետ քաղաքները, նպատակ ունեին բոլորովին ոչնչացնել հայկական Կրիլիկիան, այդ փոքրիկ

1) Սմբատ Պատմագիր, 1856, էջ 113
2) Կիրակոս Գանձակեցի, էջ 269
3) Կիրակոս Գանձակեցի, էջ 270

երկիրը, որը որպես քրիստոնեական պետութիւն, մուսուլմանական երկրներէ համար շարիքներէ անսպաս ազդու էր հանդիսանում: Մուսուլմանական պետութիւնները գիտեին, որ եթէ չլինէր հայոց կիլիկիան թագավորութեան նշանակալից և բարոյական օգնութիւնը, ապա, խաչակիրներէ օրոք, արևմտյան պետութիւններէ ոչ մեկը զորաբանակ չէր կարող իջնել Անատոլիայի վրա և այնպէս հաղթութիւն տանել: Եվրոպական պետութիւնները քրիստոնեութեան քողի տակ շոգոքորթում էին հայ ֆեոդալներին, նրանց իրենց քաղաքական նպատակներէ մեջ քաշում, իսկ անհաջողութեան դեպքում՝ թողնում Հայաստանը անսպասու և հեռանում: Այն ժամանակ հայկական այդ փոքրիկ պետութիւնը Կիլիկիայում մենակ էր գիմազրում մուսուլմանական այն վիթխարի պետութեանը, որին վերջնականապես հաղթել չկարողացան արևմտյան Եվրոպայի առաջավոր պետութիւնները: Հայոց կիլիկիան թագավորութիւնը գլխավորում էր գիվանազիտական ընդունակութիւններով օժտված, իր ժամանակի խոշորագույն մտածողներից մեկը՝ Հեթում 1-ին թագավորը: Նրա գիվանազիտական և քաղաքական շահերը պահանջում էին այդ մոմենտին ոչ թե դուրս գալ մոնղոլ նվաճողների դեմ օրհասական պայքար մղելու, այլ ընդհակառակը, որքան կարելի է շուտ լեզու գանել և գիվանազիտական հարաբերութիւններէ միջոցով դառնալ մոնղոլական մեծ խանի զաշնակիցը:

Հեթում 1-ին թագավորը, չնայած 1243 թվին գաշինք էր կնքել մոնղոլ նվաճողների գլխավոր հրամանատար Բաչու Նոյունի հետ, բայց և այնպէս այդ գաշինքը ամուր չէր և չէր կապված մեծ խանի հետ: Հեթում 1-ին թագավորը, լինելով ժամանակի խոշորագույն մտածողներից մեկը, մտածում էր այն մասին, թե ինչպէս անել՝ ամբաստանելու և օրինականացնելու իր թագավորութեան բարեկամական հարաբերութիւնները մոնղոլների կենտրոնական իշխանութեան հետ: Այդ նպատակի համար կիլիկիան հայոց թագավոր Հեթում 1-ինը, խորհրդակցելով իր երկրի առաջադեմ մարդկանց հետ, որոշում է Մոնղոլիա ուղարկել իր եղբայր Սմբատ Գունդուսապլին՝ կիլիկիան զորքերի գլխավոր հրամանատարին: Սմբատ Գունդուսապլը իր ժամանակի ամենաառաջադեմ մարդն էր: Նա, բացի գիվանազիտական ընդունակութիւններ ունենալուց, և քաջ զորավար էր: Մտ

50 տարի շարունակ Սմբատ Գունդուսապլը համառ պայքար էր մղում սելջուկների, թյուրքերի, կղիպտացիների դեմ և երբեք պարտված չէր եղել: Այդ փառապանծ զորավարը, չնայած իր չափազանց զբաղված լինելուն, այնուամենայնիվ ժամանակ էր գտել զբաղանքի յարմար և գիտութեամբ զբաղվելու: Նա թողել է իր կազմած մի օրենսգրքական ձեռնարկ, որը հանդիսացել է կիլիկիան հայ իշխանների միակ օրենսգրքական ձեռնարկը: Բացի դրանից, Սմբատ Գունդուսապլը գրել է մի շատ հետաքրքիր ժամանակագրութիւն, որը նաև թարգմանված է օտար լեզուներով: Անա այդ բազմակողմանի և ընդունակ մարդուն էր վիճակվել այն մեծ պատմական միտքին, որ նրա վրա էր զրվում Կիլիկիայի հայ ժողովրդի կողմից: Այդ մասին Կիրակոս Գանձակեցին գրում է.

«Արքայն հայոց Հեթում, որ ի Կիլիկիա տաքեաց զեղբայր իւր Սմբատ զօրաւարն առ Դանն երեկի պատարագօք, և նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին, և յոյժ մեծարեալ ի նմանէ, զարձաւ երեկի փառօք, և հաւատարիմ հրովարտակօք տուեալ նմա գաւառս բազումս և բերդս յարմա, զոր յառաջ լեալ էր Լիսնի արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլթանն Հոսոմոց»¹⁾: Այդ մասին տեղեկութիւն է տալիս նաև 13-րդ դարի պատմագիր Մխիթար Այրիվանեցին, բայց նա գրում է, որ Հեթում թագավորը և Սմբատը միասին են գնացել Կարակորում:

«Մանգու խանն արեղերակալեաց, գնաց առ նա Հեթում արքայն հայոց և Գունդուսապլ Սմբատ եղբայր իւր, և պատուեցան ի նմանէ»²⁾:

Բայց միայն Մխիթար Այրիվանեցին է, որ տեղեկութիւն է տալիս Հեթում 1-ին թագավորի՝ Մոնղոլիա գնալու մասին իր եղբոր հետ միասին: Մյուս ազդուները հաստատում են Կիրակոս Գանձակեցու կարծիքը, այսինքն այն, որ Հեթումը ոչ թե գնացել է իր եղբոր հետ, այլ սկզբից գնացել է Սմբատը և իր թագավոր կղբը հետագա բանակցութիւնների համար հոյ պատրաստել: Այդ մասին ինքը՝ Սմբատ Գունդուսապլը իր «Ժամանագրութեան» մեջ գրում է «... ի թուին ՈՂԷ (697—1248) գնացի ևս, Սմբատ Գունդուսապլս ի թաթարն և ի թուին ՈՂԹ

1) Կիրակոս Գանձակեցի, նույն տեղ էջ—301—302.

2) Մխիթար Այրիվանեցի—«Պատմութիւն հայոց», նույնը էջ 67.

(699—1250) գարձայ առ իմ եզրայրն Հեթում թագաւորին»¹): Մմբատ Գունդստապլի հազարգած տեղեկությունները, բացի Կիրակոս Գանձակեցուց, հաստատում է Վարդան Վարդապետը: Մագաքիա Արեղան նույնպէս հաստատում է վերահիշյալ տեղեկությունները: Նա գրում է՝ երբ Մմբատ Գունդստապլը այդպէս փաստով վերագործավ Մոնղոլիայից, մեծ սրախություն պատճառեց բոլորին:

«Ձեր տեսեալ բարէպաշտ թագաւորն Հեթում զպարոն եզրայրն իւր զՄմբատ այնպիսի պատուով պատուել և մեծարեալ ի Ղանէն, յոյժ սրախացաւ յաբախութեան մէծ. ևս առաւել ընդ գրեալսն վասն ազատութեան երկրիս և վանորէիցս և ամենայն քրիստոնէից»²):

Մմբատ Գունդստապլը մեծ հաջողությամբ կատարում է իր վրա գրած պարտականությունները և պատվով վերագտնում հայրենիք: Ըստ պատմագիրների վկայության, Գուշուկ խանը ընդունում է Մմբատ Գունդստապլին մարզասիրությամբ և պատվով աալիս է նրան մեծ իրավունքներ և արտոնություններ, վերականգնում է նրանց ֆեոդալական իրավունքները: Մոնղոլական խանը վերագործնում է կիլիկյան Հայաստանի այն գավառները, որ խլված էին Լևոն 2-րդի մահից հետո՝ Ռումի սուլթանության կողմից:

Լևոն 2-րդի օրոք կիլիկյան թագավորությունը իր զարգացման գագաթնակետին էր հասել: Նրա մահից հետո միայն Հեթում թագավորն էր, որ որոշ չափով վերականգնեց կիլիկյան հայոց թագավորության սահմանները, այն էլ ժամանակավորապես: Մմբատ Գունդստապլը, լինելով մեծ խանի արքունիքում, ըստ երևույթին, խոսել է Լևոն 2-րդ թագավորի ժամանակաշրջանի կիլիկյան հայոց սահմանների մասին: Գուցե այդ էր պատճառը, որ մեծ խանը նրան տալիս է Լևոն 2-րդի ժամանակաշրջանի հայոց սահմանները, բացի այդ, մեծ խանը, որպէս պատիվ, գրել ավելի հրովարտակ և, ինչպէս Մագաքիա Արեղան է գրում, որպէս հարգանքի նշան, նրան տա-

1) Մմբատ—նույնը՝ էջ 113.

2) Մագաքիա Արեղա—նույնը՝ էջ 17—18.

լիս են մի մոնղոլուհի 1), որին հետը բերում է Հայաստան և նրանից մի ազգ է ունենում Վասիլ կամ Թաթար անունով: Մմբատ Գունդստապլին այդպէս հարգանքով ընդունելուց հետո, այլևս ոչ մի պայմանագիր չեն կնքում, ըստ երևույթին, նրանք պահանջում են, որ զիվանագիտական պայմանագրեր կապելու համար անպայման կիլիկյան հայոց թագավորը ինքը անձամբ ներկայանա մեծ ինքնակալին: Բացի հայ մտանապիւրներէից, հայոց կիլիկյան թագավոր Հեթում 1-ինի մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս ֆրանսիացի պատմագիր Հովհաննես Գարգիլը²), կիլիկյան հայոց Լևոն 6-րդ վերջին թագավորի խորհրդակատարը կամ, ավելի ճիշտ, խոստովանահայրը, որը հայոց թագավորի ինկրանքով գրեց «Ժամանակագրութիւն հայոց» կարևոր աշխատությունը, որը մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության և մոնղոլական շրջանի զիվանագիտության խնդիրների ուսումնասիրության համար³):

Գարգիլը, տեղյակ լինելով պատմական իրողություններին, խոսելով Հեթում թագավորի զիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ, գրում է.

«Յայնմ ժամանակի սուլթանն Բաբելոնի, որ կոչէր Մէլիք

1) Երբ Մմբատ Գունդստապլը հայոց զորքերի զուտն անցած կովում է սուլթանի հրոսակախմբերի դեմ, նրա երիտասարդ աղան՝ Թաթարը կովում է հոր հետ միասին ամենայն հերոսությամբ: «Եղև նորա և այլ որդի Վասիլ և մականուն զի էր ի թոթար կոչէն զոր ըստ հրահանգայ պատուի թաթարաց էր նման Մանգուղան ի զայ առ ինքն պետանութեամբ ի գրանէ եզրորն: Ալիշան. «Միսուան», Վենետիկ, 1885, էջ 72.

2) 1377 թվին ֆրանսացի Հովհաննես Գարգիլը այցելում է Կահիրե և ծանոթանում այնտեղ բանտարկված հայոց թագավոր Լևոն 6-րդի հետ, դառնում նրա խոստովանահայրը և խորհրդակալը: Գարգիլը շանքերով հայոց թագավորը ազատվում է Կահիրեից և փոխադրվում Փարիզ: Գարգիլը այդ գործի համար որպէս վարձատրություն Հոսմի պապի կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս:

3) Յովհաննես Գարգիլու «Ժամանակագրութիւնը» առաջին անգամ տրվովել է Գոլեի մտանագարանում և այդ մասին գրվեց լատինական արևելքի արևելի 2-րդ հատորում, որը հրատարակում էր կոմս Ռիանը 1886 թվին Կ. Պոլիսում Ռոբին Արքեպիսկոպոս Նար-Պեյին հաջողից թարգմանել գրաբար լեզվի՝ Նին ֆրանսերեն օրիգինալից:

Այդ աշխատանքը գրոթ. Եղևանցը 1891 թվին հրատարակեց Ս. Պետերբուրգում (աւս-Յովհաննես Գարգիլի «Ժամանակագրութիւն հայոց», Ս. Պետերբուրգ. 1891):

Նազար, մտախոհ լինէր ի սրտի խբում ասպատակել յաշխարհըն, սրում տիրէր արքայն Հեթում, զի ի բազում նուազս խաբեալ էր արքային զսուլթանն և գերկիր նորա, ի պաշտպանութիւն և ի բարգաւաճումն քրիստոնէական հաւատոց: Եւ առ ի խափանել զչար խորհուրդ սուլթանին, էլ մեկնեցաւ արքայն Հեթում յերկրէ աստէ խբմէ, յամին շնորհաց 1253, և շտաւ առ մեծ խանն, աէր Թաւրթոյ, զնել զաշն ընդ նմա զի ձեռն աացէ բնդղեմ սուլթանին և տարաւ առ նա պարզեա մեծամեծս և ընծայս ճոխաձեռս: Եւ խանն մեծ բնկալաւ զնա ախորժ հաճութեամբ և զամենայն հայցուածս և զազաշանս զոր առաջի արար նմա արքայն Հեթում» 1):

Հեթում 1-ին թագաւորի՝ Մանգու խանի մոտ գնալու մասին 2) մանրամասն պատմում է Կիրակոս Գանձակեցիին: Նա գրում է, որ հայոց Հեթում 1-ին թագաւորը իր եզրոր վերագարձից հետո, երբ իմացաւ մոնղոլներին մեծ խան Մանգուի վերաբերմունքին մասին, որոշեց գնալ Մոնղոլիա: Որպեսզի իրեն չճանաչեն, նա փոխում է իր հագուստը և գնում որպէս հասարակ ճանապարհորդ:

«Իսկ յորժամ թագաւորեաց Մանգու խանն, — գրում է Կիրակոսը, — առաքեաց մեծ թագաւորահայրն և զօրապետն Բաթու, որ ի կողմանս հիւսիսոյ գտեղ առեալ կայր անթիւ բազմութեամբն, որ ընդ նմա առ ափն մեծ և անհուն գետոյն զոր եթիլ կոչեն, որ մտանէ ի ծովն Կասպից, առ թագաւորն Հեթում զալ տեսանել զնա և զՄանգու խանն: Եւ նա երկուցեալ ի նմանէ, պայ զաղապարդի, այլակերպեալ զինքն վասն աճին թուրքաց, որք սահմանակիցք նորա էին, զոր հասոմոց սուլտանն անուանեն, որում անուն է Ալաղին, զի սխս մթերեալ ունէին ընդ նմա վասն ձեռն տալոյ նորա ի թաթարն, և փու-

1) Յովհան Գարգել, նույն տեղը՝ էջ 17:

2) Հայոց թագաւոր Հեթում 1-ինը մեծ խանի մոտ է գնում Կիրակոսից, իր թագաւորանիւս Սիս մայրաքաղաքից, ըստ Աբուլ Գուսալի, 1254 թ. նա անցնում է Կեսարիայի վրայով Սեբաստիա, Երզնկա, այնտեղից հասնում է Բաշու Նոյինի թագաւորանիւս Կարս Իսկ այստեղից գնում է Գերբենդով, Վուզայի վրայով դեպի հյուսիս: Այդ ճանապարհորդութեան մասին Կիրակոս Գանձակեցիին հասկացրել է մի ամբողջ գլուխ:

«Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին հայոց Հեթումոյ առ Բաթոյն և Մանգու զանն», Այդ գլուխում Կիրակոսը բազմաթիվ երկրների և քաղաքների անուններ է աւելիւ: Մենք այդ գլուխը առանձին բացատրութեան ներքո կճշտատրակենք առանձին ուսումնասիրութեամբ:

թով անցեալ ընդ երկիր նորա յաւուրս երկոստասան, եկն ի Կարս քաղաք» 1): Հայանի արեւելագետ Գերբենդը հայանում է, որ երբ Հեթում 1-ինը անցնում էր իր անձնակազմի հետ Ռումի թագաւորութեան վրայով, նրան սուլթանի մարդկանցից ճանաչում են, իսկ թագաւորի ծառաներից մեկը համարձակութեամբ ապտակում է իր թագաւորին (Հեթում 1-ին) և այգալտով ստիպում է սուլթանի շինովնիկներին, որ նրանք չկարծեն, թէ անցնողը հայոց թագաւորն է: Եվ այդպէս, Հեթում 1-ին թագաւորը հաջողութեամբ հասնում է մոնղոլական մեծ խանի թագաւորանիւս Կարակորումը: Նա այնտեղ պայմանագրի է կնքում, որը շատ հետաքրքիր է և պատմական բացառիկ կարևոր նշանակութեամբ ունի ինչպէս մոնղոլական շրջանի գիւմնազիտութեան, այնպէս էլ հայ ժողովրդի գիւմնազիտութեան պատմութեան ուսումնասիրութեան համար: Այդ կարևոր գոկուսեանք մեղ է հասել Հեթում 1-ին թագաւորի եզրոր որդի իշխան Հեթում պատմիչի կողմից: Այդ պատմութեանը, որտեղ գեանդված է Հեթում 1-ին թագաւորի և մոնղոլական ինքնակալ Մանգու խանի միջև կնքված պայմանագրերը, գրված է եղել հին ֆրանսերեն լեզվով: Օրիգինալ տեքստը, որից մենք օգտվել ենք, գրի է առնվել Հեթում պատմիչի թերադրութեամբ՝ նրա անձնական քարտուղար Նիկոլայ Սալքսնի 2) միջոցով: Այդ պատմութեանը 1307 թվին, Հոսմի Կղեմես 3-րդ պտպի կարգադրութեամբ, հին ֆրանսերենից թարգմանվում է լատիներենի, իսկ հետագայում՝ եվրոպական այլ լեզուներին:

1842 թվին Մկրտիչ Ավգերյանը «Փամանակադրութեան» լատիներեն տեքստը թարգմանում է գրաբար լեզվով, փոխելով վերնագիրը 3) «Հեթում Պատմիչ թաթարաց» 4): Հիշված պայմանագրի տեքստը մինչև այսօր գծրախաւարար օգտապարծվում է Մկրտիչ Ավգերյանի գրաբար թարգմանութեամբ: 1937 թվին Յրիկի ժողովածուն կազմուցներ Հ. Հարությանյանը և Ս. Պա-

1) Կիրակոս Գանձակեցի, էջ 351

2) Սալքսն անունը պրոֆեսոր Կոստանյանի մոտ դարձել է «Փալսն»: Օրիգինալ տեքստում պարզ գրվում է «Սալքսն» (տես Կոստանյան՝ «Հայագիտութեանը արեւմտյան եվրոպայում», Թիֆլիս, 1910, էջ 17: Սալքսնը Հայտան իշխանի անձնական քարտուղարն է եղել և մինչև իր կյանքի վերջը ծառայել է նրան:

3) Տեքստի մեջ գրված է «Արեւելյան ժողովուրդների պատմութեան»:

4) «Հեթում Պատմիչ թաթարաց», Վենետիկ 1842 թ.

զույսանը, Ֆրիկի գարաշրջանի մասին պատմական ակնարկ գրելիս, նշում էր Վերջինի կերպը ևն Ավգերյանի ազգագրագետ թարգմանությունները 1): Իսկ Մասիվայում, զոցենա Վարդան Ավետիսյանը իր թեկնածուական դիսերտացիան գրելիս, գարձյալ օգտվել է այդ թարգմանություններից 2): Վենետիկի վանական Ավգերյանը, պայմանագրի նշանակությամբ մեծացնելու նպատակով, որոշ կհաներ գիտավորչալ կերպով կեղծել է: Այդ պատճառով էլ միջնադարյան հայ գիտնապիտուկյան ուսումնասիրություն համար բացառիկ նշանակությամբ ունեցող այս գուղումենոսը կորցրել է իր պատմական և քաղաքական նշանակությամբ: Այսպես օրինակ, 2-րդ կեսի մի համաձայնում նա թարգմանել է. «Զի խաղապուրիւն և բարեկամութիւն մշանջնաւոր հաստատեսցի ի մեջ նոցա» 3): Իսկ Ֆրանսերենի մեջ ասված է. «Արագուրի մշտական խաղապուրիւն և բարեկամութիւն լինի քրիստոնյաների և թաթարների (մանգոլների Ա. Գ.) միջև»: Ավգերյանը իրենից օգտվողները է այնպիսի խոսքեր, որոնք տեքստի մեջ բացակայում են: Տեքստում Հեթում 1-ի կարակարում գնալու մասին գրված է, թե «երբ նրան հանդիպեց մանգոլական զորավարը և իմացավ, որ նա հայաց թագավորն է, մարդասիրութեամբ քնդունեց նրան և ուղեկցեց մինչև Կումանի թագավորութեանը, նրա անվանագրութեան համար», իսկ Ավգերյանը թարգմանել է այսպես. «...Մինչև ի թագավորութիւն հայաց ի գունն երկաթի»: Այս թյուրիմացութեամբ անցյալ գարում անախորժութեանների առիթ է ավել, ասն ասլով ազգանքին բարձուական պատմագրութեանը 4): Պայմանագրի մեջ հայաց սահմանի մասին խոսք չկա և չէր էլ կարող լինել: Ամենից մեծ նշանակությամբ ասնի պայմանագրի 3-րդ կեսը, որը վերաբերվում է քրիստոնյաներին արտոնութեաններ տալուն: Այդ համաձայն, որը նույնպես խաթարված է Ավ-

գերյանի կողմից, ասնի սկզբունքային նշանակությամբ և ամենակարևոր կետերից մեկն է հանգիստում: Ավգերյանը թարգմանում է այսպես. «Զի ամենայն երկրիս թաթարաց կարիցեն շինել և կեղեցիս քրիստոնէից և Հայք ազատ լինիցին յամենայն կազալաց և յայլաց ծանրութեանց», իսկ օրիգինալում գրված է՝ «որպեսզի մանգոլների կողմից նվաճած կամ հետագայում նվաճվելիք բոլոր երկրներում քրիստոնեական բոլոր կեղեցիները և հոգեվարականները, լինչպես և կեղեցական, այն պես էլ վանական, ազատ լինեն ամեն տեսակի սարկութեանից, անգամ հարկերից»: Ինչպես տեսնում ենք՝ օրիգինալում, թե ճին ֆրանսերեն և թե լատիներեն, հայ կամ հայեր, հայաց սահման խոսքերը բացակայում են: Այս բոլորը խցկված են տեքստի մեջ Մկրտիչ Ավգերյանի կողմից: Ինքնըստինքյան հակասակ է, որ Մկրտիչ Ավգերյանը միջին դարերի գիտնապիտուկյան պատմության առարկեղում հայ գործիչների գերը մեծացնելու նպատակով, գիտավորչալ կերպով ազգագրել է պատմական այդ կարևոր գուղումենոսը: Հետևանքը եղել է այն, որ հետագա բոլոր ուսումնասիրողները կաշկածել են: այդ գուղումենոսի խաթարյան վրա և նույնիսկ հրամարվել են նրանից օգտվելուց, օրինակ՝ ակադեմիկոս Մանանդյանը և ուրիշները:

Ինչպես մեծ Հայքի հայ քաղաքական գործիչների բանակցությունները, այնպես էլ Կրիլիյան հայաց թագավոր Հեթում 1-ինի պայմանագրերը, թե ձևով, և թե իր բովանդակությամբ միանգամայն համապատասխանում է միջնադարյան մանգոլական շրջանի գիտնապիտական սկզբունքների և ասնի խոսքը պատմական ու քաղաքական նշանակությամբ:

Այդ խոսքերների փաստացի բնութանման առիթով մենք թարգմանում ենք Հեթում պատմիչի «Փամանակագրութեան» 23-րդ գլուխը, որի մեջ է նաև Հեթում 1-ինի պայմանագրի տեքստը՝ մեր բացատրությամբ և ծանոթութեաններով:

1) Ֆրիկ, Ժողովածու, Երևան 1937 թ.
 2) В. Аветисян «Монгольское пашествие на Армению» (XIII). Труды Ин-та Востоковедения, Москва, 1939 г.
 3) Հեթում, նույնը, գլուխ 33, էջ 43-44.
 4) Հեթում պատմիչին համարելով «պատմական պատկազիր», շատ հայտնիներ բոլորվին սխալ կարծիքներ են հայտնում:
 (Տես Գեղարգ Ալիբախյան «Մանգոլական արշավանքները», Վարդապատ, 1913 թ. էջ 40-50)

ՄՈՆԻՏՈՐԻՆԵՐԻ 4-ՐԳ ԻՆՔՆԱԿԱԼ ՄԱՆԳՈՒ ԽԱՆԻ 1) ՄԱՍԻՆ 2)

Տերունական 1253 թվին հայոց թագավոր Տեր-Հեթումը 3), երբ տեսավ, որ մանգոլները նվաճեցին համարյա բոլոր երկրները և պետությունները, խորհուրդ արեց գլխուն մարդկանց հետ և սրտեց անձամբ գնալ մանգոլների ինքնակալի մոտ, որպեսզի նրա հետ մտերմություն ստեղծի և կարողանա խաղաղության գաշինք կնքել:

Նախ նա (Հեթում 1-ին) ուղարկում է հայոց թագավորության սպարապետ Սմբատին, 4) իր հովատարիմ գործակցին, որպեսզի նա կարողանա ստանալ մանգոլական ինքնակալի թույլատրությունը (Մանգոլիա) ազատ և ապահով գնալու համար: Եվ այսպես, պարոն Սմբատը, հայոց (Հեթում) թագավորի եղբայրը, որի մասին խոսվում է մեծ շքամբով գնաց մանգոլներին ինքնակալի մոտ և իր վրա զբաղ պարտականությունները մեծ հաջողությամբ կատարեց: Մինչև Հայաստան վերադառնալը, ճանապարհորդության մեջ է եղել չորս տարի: Երբ նա (Սմբատը) վերադարձավ, ամեն ինչի մասին, որ նա

- 1) Գույուկ խանի մահից հետո մանգոլական իմպերիան անցավ Մանգու խանի ձեռքը:
- 2) Առաջին անգամ այս պայմանագրի տեքստը հին Ֆրանսերենից հայերեն թարգմանել են ես, 1939 թվին Լենինգրադում և պրոֆեսոր Արովի խնդրանքով ուղարկել են Երևան տղազբության, բայց գծախտաբար այդ թարգմանությունը կորել է:
- 3) Տեր-Հեթումը Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում 1-ինն է, հայոց Լեոն 2-րդ թագավորի փեսան, Զարեի (Իգարեի) ամուսինը, պարոն Կոնստանդինի ազան: Հեթում 1-ինի օրով Կիլիկիան Հայաստանը իր զարգացման բարձր աստիճանին հասավ: Նա թագավորել է 1226-1270 թվ., տես զբաղանություն՝ Մազաբիա Արեղա, նույնը, էջ 57-58, Վարդան Բարձրաբերդցի, նույնը էջ 185, Կրթական Գանձակեցի, նույնը էջ 291:

4) Սպարապետ թարգմանվում է իբրև Գունդատաղ, տեքստում զբաղված է Մինիբալդ Կանտարը, որ լատիներեն բառ է, Գունդատաղ նշանակում է ախտապետ: Մեծ Հայքում այդ տիտղոսը իբրև պատիվ Ռուբինյան իշխանության մեջ արվում էր խոշոր զորավարներին: Սմբատ սպարապետի հայրը նույնպես աներ «Գունդատաղի» աստիճան Լեոն 2-րդի թագավորության օրը: Սմբատի Մանգոլիա գնալու մասին պատմում են համարյա բոլոր ժամանակի հայ պատմագիրները: Տես Կրթական Գանձակեցի, Վենետիկ, էջ 178, Կիրակոս, Մոսկվա, էջ 188. Մազաբիա Արեղա, նույնը, էջ 16: Մխիթար Այբովանցի—«Պատմություն հայոց» Մոսկվա. 1860, էջ 82: Սմբատ. «Տարեգրքը Սրբառայ սպարապետի», Փարիզ 1859, էջ 124:

Մեզ հասել է նաև Սմբատ Գունդատաղի նամակը, որ նա գրել է ճանապարհին՝ հասցեագրված Կիպրոսի թագավորին—իր քեռուն:

տեսել և լսել էր (իր ճանապարհորդություն) ընթացքում, մանրամասն պատմեց (հայոց) թագավորին: (Այն ժամանակ) թագավորը անմիջապես մեկնեց Մանգոլիա ծածկաբար, որպես հասարակ ճանապարհորդ, որովհետև նա չէր ուզում թուրքերի երկրում, ուր վրայով հարկազրկված էր անցնել, իրեն ճանաչել: Հենց այդ ժամանակ, ասածու կամքով, Սուլթանը պարտություն է կրում մի ամեն մանգոլ զորապետի կողմից, որին ճանապարհին հանդիպում է հայոց թագավորը և ներկայանում: Երբ այդ զորապետը իմացավ, որ նա հայոց թագավորն է և գնում է իր սիրով (ինքնակալի) մոտ, հարգանքով ընդունեց և ավեց նրան պահապաններ (ուղեկիցներ), որպեսզի անվտանգ (նրան) ուղեկցեն մինչև Կոնստանտնուպոլիս թագավորությունը և երկաթի դուռ կոչված երկիրը 1): Դրանից հետո հայոց թագավորը հանդիպեց ուրիշ շատ մանգոլական զորապետներին, որոնք նույնպես ավեցին նրան ուղեկիցներ մինչև Ալմալիկը 2), որը հանդիսանում էր մանգոլ ինքնակալի թագավորանիստը:

Ինքնակալը հիացած էր հայոց թագավորի ժամանման համար, հասկապես այն պատճառով, որ երբ Չինգիզ-խանը անցնում էր Բելգիամի լեռներով 3), ոչ ոք մեծ իշխաններից նրան չէր եկել զիմավորելու 4):

Ահա թե ինչու նա (Մանգու խանը) նրան ընդունեց մեծ հարգանքով և բարեկամաբար, ավեց իր պալատականներից՝ նրան հարգելու և ծառայություն մատուցանելու:

Ինքնակալը նրան շատ լավ ընդունեց և ցույց ավեց շատ հարգալից վերաբերմունք: Հայոց թագավորը մի քանի օր հանգստանալուց հետո, խնդրեց ինքնակալին քննություն անել այն խնդիրը, որի համար նա եկել էր և թույլ տալ վերադառնալու: Ինքնակալը նրան պատասխանեց հոգատարությամբ, ասելով, թե ինքը լիով կբավարարի այն ցանկու-

- 1) Երկաթի դուռ, թե հայ և թե պարսիկ պատմագիրները Դերբենդ են հասկանում: Երբեմն էլ անվանում են Ճոպան Կապան:
- 2) Ալմալիկ, Ալադեմիկոս Բաբգուլի կարծիքով այդ քաղաքը գտնվում է հյուսիս-արևմտյան կողմը, Կարակորումում:
- Օրբելյանը, խոսելով Բատու խանի Ռուսաստանը նվաճելու մասին, գրում է. «...իսկ միև կողմն գնաց առ Հնդկաստանօք, որք տիրեցին մեծ մասին Հնդկաց եւ հնազանդցին զուզուրս... եւ զգեղեմիկս եւ առին զԱլմալիկս» (Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», թիֆլիս, 1911—էջ 401):
- 3) Բելգիամի լեռներ, մեք կարծիքով Պարստանի լեռներն են և Կապան-գաղը, որը հանդիսանում է բնական սանձանը Թուրքեստանի և Կասպից ծովի միջև:
- 4) Այսպեղ, բառ երևույթին, հեղինակը ոչ թե նկատի ունի Չինգիզ-խանին, այլ ընդհանրապես մանգոլական ինքնակալներին: Հեթումն այն թագավորներից էր, որը բոլորից շատ գնացել է և ներկայացել է մանգոլներին ինքնակալ Մանգու-խանին և նրա հետ գաշինք կնքել:

թյունները, որի համար նա եկել է։ Այն փաստը, որ հայոց թագավորը եկել էր նրա տիրապետությանը շատ հեռվից, առանց որևէ հարկադրանքի, այլ իր սեփական կամքով, ինքնակալի համար շատ գուբալի էր։ Հայոց թագավորը կազմեց յսթը կես, որոնց մասին ցանկանում էր նրան խնդրել։


ԱՌՄՁԻՆ.—Նա (հայոց թագավորը) խնդրեց ինքնակալին իր ժողովրդի հետ միասին ընդունել քրիստոնեությունը, թողնել մյուս բոլոր պաշտամունքները և մկրտվել։ ԵՐԿՐՈՐԿ.— Որպեսզի մշտական խաղաղություն և բարեկամություն լինի քրիստոնյաների և մոնղոլների միջև։ ԵՐԿՐՈՐԿ.— Որպեսզի մոնղոլների կողմից նվաճած կամ հետագայում նվաճվելիք բոլոր երկրներում քրիստոնեական եկեղեցին և հովհորականությունը, ինչպես եկեղեցական, այնպես էլ վանական, ազատ լինեն ամեն անտակ ստրկությունից և անշամ հարկերից։ ՉՈՐԿՈՐԿ.— Որպեսզի նա (ինքնակալը) սարացիների ձեռքից հետ վերցնի մեր ախրոջ գերեզմանի հետ միասին Սուրբ երկիրը և այն վերադարձնի քրիստոնյաներին։ ՀԻՆԳԵՐՈՐԿ.— Որպեսզի նա կրտսիվ հայտարարի Մահմեդի պիղծ կրոնի և նրա զլխավորի՝ Բազգազի խալիֆի դեմ։ ՎԵՑԵՐՈՐԿ.— Որպեսզի նա (ինքնակալը) նրան (Հեթումին) որպես առանձին արտոնություն իրավունք վերապահի հարկ եղած դեպքում օգնություն գիտերու բոլոր մոնղոլներին և հատկապես նրանց, որոնք սահմանակից են Հայոց թագավորությանը, և որ այդ օգնությունը կատարվի անմիջապես։ Եվ վերջապես ՅՈՒԵՐՈՐԿ.— Նա (Հեթում 1-ինը) խնդրեց, որ բոլոր այն երկրները, որոնք պատկանելիս են եղել Հայոց թագավորությանը և որոնք խլված են սարացիների կողմից և ներկայումս գտնվում են մոնղոլների տիրապետության ներքո, վերադարձվեն իրեն, որպեսզի նա (Հեթում 1-ինը) կարողանա հնարավորություն ունենալ խաղաղություն կատարելու այն երկրները, որոնք կվերցվեն վերջիշված սարացիներից և կարվեն նրան։

Մանրու խանը, լսելով հայոց թագավորի խնդիրը, հավաքեց իր խորհրդականներին և նրա ներկայությամբ պատասխանեց հետևյալ կերպ. նկատի ունենալով, որ հայոց թագավորը մեր երկիրն է եկել շատ հեռվից, առանց որևէ հարկադրանքի, այլ իր սեփական կամքով, հետևապես անհրաժեշտ է



Հ Ե թ Ո Ւ Մ I
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐ
(ԹԱԳԱՎՈՐԵԼ Է 1226—1270 թ. թ.)

Г Е Т У М I
Киликийский армянский царь
(Царствовал 1226—1270 г. г.)



բազարարել նրա խնդիրը, հատկապես այն բանի համար, ¹ այդ պահանջները արգարացի են և խորմատա:

Ո՛հ, հայոց թագավոր, մենք ձեզ հայտարարում ենք, որ ձեր խնդիրները մեր կողմից ընդունելի են և մենք ասածու օգնությամբ կկատարենք:

Նախ, ես՝ մոնղոլների ինքնակալ և տիեզերակալս կմքկբա-
վեմ, կընդունեմ քրիստոնեական կրոնը և այնպես կանեմ, որ
իմ հոգատակ ժողովուրդը նույնը անեն, չնայած ես մաապիր
չեմ սրեկ մեկին հարկադրելու այդ գործում:

Ինչ վերաբերվում է ձեր երկրորդ խնդրին, մենք պատաս-
խանում ենք, որ մեր հոգատակն է մշտական խաղաղության և
բարեկամության հիմք դնել մոնղոլների և քրիստոնյաների
միջև:

Այնուամենայնիվ, գուք ձեր կողմից պարտավոր եք այն-
պես անել, որ քրիստոնյաները իրենց հերթին գործ դնեն բու-
լոր հնարավոր միջոցները այդ համաձայնագիրը պաշտպանելու
համար:

Մենք նույնպես ցանկանում ենք, որ քրիստոնեական
եղեղեցին և բուլոր հողերականությունը, ինչպես եկեղեցական,
այնպես էլ վանական, մեր աիրապետության տակ գանվող բու-
լոր երկրներում ազատ օգտվեն արատնություններից և սրպիս-
զի նրանք ոչ մի առիթով չճնշվեն և չանհանգստացվեն: Իսկ
սուրբ երկրի վերաբերյալ մենք ասում ենք, եթե խանգարիչ
հանգամանքներ չլինեն այն հարգանքի համար, որ մենք աս-
ծում ենք զեպի Հիսուս-Քրիստոսը, անձամբ ինքներս կգնա-
յինք: Բայց որովհետև մենք այս տեղերում շատ զբաղված ենք,
ուստի այդ գործը կհանձնարարենք մեր եղբայր Հաղունին 1),

1) Հաղունը մոնղոլական հայանի գորավար Հուլաղու խանն է, Տուլի
որդին, Չինգիզ խանի թոռը: Նա իր ճարպկությամբ կարողացավ հիմք դնել
իլխանների թագավորությանը (1256—1349), որի իլխանության մեջ մտնում
էին Պորեզմ, Արանք, Հայաստանը, Վրաստանը, Աղբրեջանը: Հուլաղու խանն
էր, որ 1258 թվին վերացրեց Արքատիգների արարական դինաստիան և գլխա-
տեց արաբական վերջին խալիֆին: Համաձայն պարսկական և հայկական
պատմագիրների տված տեղեկություններին՝ Հուլաղու խանը ընդունել է
քրիստոնեությունը: Նրա մահվան առթիվ Ստեփաննոս Օրբելյանը գրում է.
«Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւն
քրիստոնեիս Հուլաղու խանն մեռանի յամին 713», Օրբելյան, էջ 417 (տես
նաև «Հեթում պատմիչ», նույնը՝ էջ 25):

որպեսզի նա, ինչպես հարկն է, կատարի նա կըջապատի երուսաղեմ՝ քաղաքը և կվերջնի այն, նրա հետ նաև ամբողջ սուրբ երկիրը և այնուհետև դուրս կվանգի բոլոր հեթանոսներին, վերադարձնելով այն (երկիրը) քրիստոնյաներին: Իսկ ինչ վերաբերվում է Բաղդադի խալիֆին, մենք կհրամայենք մոնղոլների հրամանատար Բայդոին, որը գտնվում է թուրքերի երկրում, և նրանց, որոնք գործում են հարևան երկրներում, որպեսզի նրանք պատրաստ լինեն կատարելու մեր եզրուր հրամանը, իսկ մենք ցանկանում ենք, որ նա սջնչացնի (Բաղդադի) խալիֆին, որպես մեր ամենատիկերիմ թշնամուն:

Ինչ վերաբերվում է հայոց թագավորի՝ արտոնություններ խնդրելուն, որ նրանք (այսինքն քրիստոնյաները) իրավունք ձեռք բերեն՝ հարկ կգած զեղքում զիմելու մոնղոլների օգնությանը, մենք ցանկանում ենք, որ հայոց թագավորն այդ մասին արտահայտեր իր բոլոր ցանկությունները և մենք հաճույքով այն կկատարենք: Վերջապես հայոց թագավորի այն խնդիրների մասին, որ նրան վերադարձնենք (այն երկրները), որոնք առաջ պատկանում էին հայոց թագավորությանը, իբրև ված են եղել սարացիների կողմից և ներկայումս գտնվում են մեր իշխանության ներքո, այդ նրա խնդիրը նույնպես մենք հաճույքով կկատարենք և կհրամայենք մեր եզրայր Հաղոսին՝ առանց ուշացնելու այդ երկրները վերադարձնի նրան (հայոց թագավորին): Բացի այդ, մենք ցանկանում ենք և կհրամայենք՝ մեր կողմից (հայոց) թագավորին որպես պարզև տալ լրացուցիչ հողեր և ամբոցներ իշխանության տպանովման համար»¹):

Ահա այն պայմանագրի տեքստի բովանդակությունը, որի մասին մինև այսօր ճիշտ պատկերացում չունեն մեր ժամանակաշրջանի շատ ու շատ արևելագետներ:

Ինչպես երևում է պայմանագրի տեքստից, մոնղոլական մեծ խանը այն բոլոր կետերը, որոնք ընդհանուր բնույթ ունեն և վերացական են, հաճույքով ընդունում է, բայց հենց որ խոսքը վերաբերվում է կոնկրետ պահանջներին՝ Մանգու խանը չի ուզում հասկանալ և պահանջում է Հեթումից, որ նա ան-

1) Պիեռ. «Հիստորա զէ պի օրիննոր», էջ 36—39 (տես Պիեռ Բեր-
ժեղոնի նույն աշխատություն, հատոր 1-ին, համեմատել լատիներեն թարգ-
մանության հետ), տես իստորիա օրիննապիսէ Հարոսնի Բառնենիի):

միջապես սաի, թե ինչպիսի կոնկրետ օգնություն է ցանկանում: Տեքստում սոված է:

«Ինչ վերաբերվում է հայոց թագավորի՝ արտոնություններ խնդրելուն, որ նրանք (այսինքն քրիստոնյաները) իրավունք ձեռք բերեն՝ հարկ կգած զեղքում զիմելու մոնղոլների օգնությանը, մենք ցանկանում ենք, որ հայոց թագավորն այդ մասին արտահայտեր իր բոլոր ցանկությունները, և մենք հաճույքով այն կկատարենք»:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայոց թագավորը չէր կարող նախադուշակել, թե ինչ օգնություն և ինչպիսի պարագայում պետք կլինի մոնղոլներին խնդրել, հետևապես Մանգու խանը ոչ մի կոնկրետ օգնություն ցույց չի տալիս Հեթում թագավորին:

Այդպես էր ընդհանրապես մոնղոլական շրջանի զիվանագիտության զբովածքը: Պլանո կարպինին, որը բաղմաթիվ զիվանագետներ և զանազան քաղաքական գործիչներ էր տեսել մոնղոլների թագավորանիստ կարակորումում և ինքը անձամբ մասնակցել էր նրանց բանակցություններին, միանգամայն ճիշտ հասկանալով մոնղոլ բանակալների քաղաքականությունը, գրում է.

«Պետք է իմանալ, որ նրանք (մոնղոլները Ա. Պ.) ոչ մի մարդու հետ պայմանագիր չեն կնքում, եթե նրանք չեն ենթարկվում նրանց, որովհետև ինչպես վերը հիշեցինք, նրանք ունեն Չինգիզ խանի հրամանը՝ հնարավորության զեղքում ամբողջ աշխարհը իրենց ենթարկել: Ահա թե ինչու մոնղոլները պահանջում են նրանցից, որպեսզի նրանք գնան մոնղոլների գործերի հետ կապելու բոլոր նրանց զեմ, ում որ նրանք կցանկանան»¹):

Պլանո կարպինի հազորգած տեղեկությունները համապատասխանում են այն կոնկրետ վերաբերմունքին, որ ցույց են տվել մոնղոլ նվաճողները Հեթում թագավորին և ընդհանրապես հայ-վրացական Ֆեոդալներին, որոնք գնացել էին մեծ-խանի մոտ նրա օգնությունն ու հովանավորությունը խնդրելու:

Հեթում թագավորի պայմանագրի կոնկրետ արտահայտությունը հաստատվում է պատմական փաստերով: Այսպես, օրի-

1) Պլանո կարպինի, նույնը՝ էջ 33:

նակ, երբ Հեթում թագավորը վերադառնում է Կարակորումից, նա անմիջապես գլխավորում է հայ-մոնղոլական զորքերի սահմանական գործողությունները դեպի Միջագետք և արարական երկրներ: Այդ մասին տեղեկություն է տալիս Վարդան Վարդապետը: Նա, խոսելով Հուլիոս խանի 1259 թ. արշավանքի մասին, գրում է.

«Ընդ նմա էր ի յանուշն դամենայն աշխարհի Շամայ և մեր պսակաւորն Հեթում (Հեթում 1-ին Ա. Գ.) ազատելով ի մահանէ ըզքրիստոնեայնսն, զեկեղեցականս և զաշխարհականս՝ յամենայն տեղիս լինելով որում հատուցէ Տէր հավատաւոր թագութեամբ մեզայ և յերկարութիւն կենաց ըստ իւրոց կամաց յորդոց որդիս»¹):

Վարդան Վարդապետի հազորդած տեղեկությունները հաստատվում են մյուս հայ պատմագիրների կողմից: Մաղաքիա Արեգան Հեթում թագավորի՝ մոնղոլ նվաճողների հետ բանակցություններ վարելու մասին գրում է, որ Հեթում թագավորը, երբ խորհրդակցում էր իր իմաստուն հոր, Կոնստանտինի, որդիների և իշխանների հետ՝ մոնղոլների հետ սերտ հարաբերություններ ստեղծելու մասին, նրանք բոլորը համաձայնվեցին Հեթումի արաւոյաշատ մաքերին: «...Հաստատեցին ի միաս իւրեանց հնազանդել տատարին»²):

Հեթում թագավորի հետ միասին, ինչպես վերը հիշեցինք, մասնակցել են մոնղոլների նվաճողական արշավանքներին հայկական ու վրացական բազմաթիվ իշխաններ: Նրանք ոչ թե իրենց կամքով էին մասնակցում այդ բարբարոսների նվաճումներին, այլ հարկադրված էին այդ անելու: Յուրաքանչյուր իշխան, եթե նա պայմանագիր էր կնքում մոնղոլների հետ, ապա նա նախ և առաջ պարտավորվում էր իր զենքով, ձիով և իր մարդկանցով մասնակցել մոնղոլների կազմակերպած արշավանքներին:

Նման վերաբերմունք մոնղոլները ունեին ոչ միայն Հեթում 1-ին թագավորի կամ թե նրա պես մանր ֆեոդալների նկատմամբ, այլ այդպես էին վարվում անգամ ամենաառաջավոր երկրների թագավորների ու իմպերատորների հետ, ինչպի-

1) Վարդան Վարդապետ, նույնը՝ էջ 198:

2) Մաղաքիա Արեգա, նույնը՝ էջ 17:

սին են Հոսոմի պապը, արեմոյան եվրոպայի կայսրները և այլն: Երբ Հոսոմի պապի ներկայացուցիչները հասնում են Կարակորում և առաջարկում են մոնղոլական խան Գույուկին պայմանագիր կնքել և բարեկամական հարաբերություններ ստեղծել, Գույուկ խանը չի համաձայնվում և ասում է, որ Հոսոմի պապը, իր թագավորների հետ միասին, պարտավոր է զուլ «ունհաստապես ինձ ողջունելու և բեկու իմ հրամանները»¹): Հայոց Հեթում թագավորը, լինելով Կարակորումում, համաձայնվել էր իր միջոցներով և իր մարդկանցով մասնակցելու այն բոլոր արշավանքներին, որ նրան առաջարկեցին մոնղոլները²):

Փաստերը ցույց են տալիս, որ հայ զինանազանները բազմապիսի մեծ արտոնություններ են ձեռք բերել մոնղոլ խաների արքունիքում:

Մոնղոլներից օգնություն խնդրելու դեպքում հայերը հաճախակի ստանում էին այդ օգնությունը:

Մեր այս մաքերը հաստատելու համար կարելի է հիշատակել մի կարևոր հանգամանք: Երբ Հեթումը 1-ին թագավորի որդի Կոնը գերի էր ընկել Եգիպտոսի սուլթանի ձեռքը, և հայերը ոչ մի կերպ չէին կարողանում նրան ազատել, այն ժամանակ նա դիմում է Արաղա խանին և խնդրում նրանից, որ պետի նա ազատի գերությունից սուլթանի ընկերոջը, որը գանվում էր մոնղոլների ձեռքում և աքսորված էր Սամարքանդ, որպեսզի փոխանակի իր որդու հետ: Ասորական պատմիչ, դեպքերին ժամանակակից Աբուլ Գաուաջը այդ մասին հետևյալն է գրում.

1) Պեղ Պոլիս—նույնը, էջ 11—15:

2) Հեթումը իր պրակտիկ, խորաթափանց և հեռուստ ընդհանուր թյան շնորհիվ գրավել էր մոնղոլ խաների ուշադրությունը: Հուլիոս խանի մոտ թողած զորաբանակը, որը բաղկացած էր 20,000 մարդուց, և հրամանատարն էր Բիթբուլան, պարտություն էր կրել սուլթանի զորքերի կողմից, բայց Հեթում 1-ին թագավորը ազատում է այդ զորքը ոչնչացումից:

Մի սոյն թուին կատարեցան զորքն զոր թողեալ էր էլզան Հուլիոս կողմապահ երկրին Շամայ՝ իրրև քսան հազար ընդ մեծ զօրազլխին Բիթբուլա ղայ կոչեցեալ զբիստոնեայ հաւատով. ընդ որ մարտեցան սուլթանն մարայ առ ստորտով թարօթական լերին անթիւ բազմութեւ մը: Եւ զի սակաւք էին բազանքն կտորեցան և զերեցան, և էին որք ցրուեցան թաքեան և ապրեալ եկին առ թագաւորն հայոց: Եւ ի նմանէ յուրով գտեան մարդասիրութիւն, հանդերձս և երիվարս և ուճիկըս եկին գոհութեամբ առ տէր իւրեանց թաթարք և զբիստոնեայք: Եւ Սայնմանէն յուրով փառաւորեցան անուն Բրիստոսի յարքայն Հեթում յօտարաց և յընտանեաց» (Վարդան—նույնը, էջ 200):

Հայոց թագավոր Հեթումը ինքն անձամբ գնաց Արագած խանի մոտ և նրանից խնդրեց, որ պետքի նա ազատի մոնղոլական գերությանից սուլթանի ընկեր Սոնկոր-էլ-Աշկարին: Արագած խանն ընդունեց հայոց Հեթում 1-ին թագավորի խնդիրը և հրամայեց, որ անմիջապես բերել տան Սամարղանդից սուլթանի ընկեր Սոնկոր-էլ-Աշկարին և հանձնեն հայոց թագավոր Հեթումին 1): Սաանալով նրան, Հեթումը Սոնկոր-էլ-Աշկարին ուղարկեց Եգիպտոս՝ սուլթանին և նրա փոխարեն ստացավ իր ավագ որդի Լեոնին» 2):

Արուլ Ֆառաջի հազարգած տեղեկությունները միանգամայն համապատասխանում են իրականությանը՝ և իբրք, երբ Լեոնը՝ Հեթում թագավորի որդին, ազատվում է գերությանից, դեռ հոր կենդանության ժամանակ օժտվում է թագավոր, ստանալով Լեոն 3-րդ տիտղոսը:

Իսկ Հեթում 1-ին կլիլիկյան հայոց թագավորը, որդուն իր փոխարեն թագավոր օժեկով, կրոնավոր է դառնում և հետանում քաղաքական ասպարեզից: Նա Մակար մականուն ստացավ և

1) Այդ մասին Մաղաբիա գրում է. «Իսկ սուլթանն Մարաջ ֆնտարտարն, թէպետ էր մահիկ, բայց յոյժ ազեկատիրա էր և խոնարհամիտ, զի թագաւորին Լեոն խիտա ազեկ էր տուէր պահել կենօք և ամ իբօք, և յորժամ լսեց զկեսպանացն գնան, ուրախացաւ և սասց, թէ պիտի զԼեոնս տանիք յիւր հայրն և յիւր թագաւորութիւն, իմ սիրելի ընկեր կայ առ տաթարն ծառայ, ու ձեր ձեռօք ի վեր ի վալ որ գնա ուղեք ի տաթարէ ձեզ զի խնայեն, գնա բերեք»:

Ազուր է անունն, և զԼեոնս տարեք: Չայս լուեալ թագավորն հայոց ի դեսպանացն, և իսկոյն զուգեաց բազում գանձս ու պատական ինչս և գնաց յարեկելք առ Աբաղայ դանն, և սասց զամենայն դանգատ, զինչ արար ժուրցին ընդ նա և ընդ երկիրն, սասց և զինգիրք սուլթանին վասն Ազուր ծառային և ոչ կարեաց թափել առ ժամայն, բայց եկն և առաքեաց զեղբօր որդին իւր, և ըստ Էջմիշտայն այս գնաց և երեւ զԱզուր ծառայն յերկիրս: Իսկ ընդ աւուրըս ընդ այսորիկ եկն սուլթանն... և յորժամ առաքեաց թագաւորն առ սուլթանն թե ընբաք զԱզուրն. յոյժ ուրախացել և բազում ընծայիք առ զամենայն առաքեաց զԼեոն, և սոքա զԱզուրն յուղարկեցին...» (Մաղաբիա, էջ 47):

2) Արուլ Ֆառաջի նյութերը մենք վերցրել ենք պատմական զխուսթյունների ղոկոսը Ի. Կ. Պիզուլիսկուց, որ մեր խնդրանք այդ նյութերը Քարգմանեց օրնգինալ տեքստից 1940 թվ. Լեոնինգրադում, որի համար մեծ հարգս գիտնականին մեր շնորհակալությունն ենք հայտնում:

այնպես էլ մեռավ 1): Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Մաղաբիա Արեղան: Նա գրում է. «Իսկ յորժամ եկն պարսն Լեոն ազատեալ ի ծառայութենէ, առ յամայն ընդպեմ գնաց բարեպաշտ և օրհնեալ թագաւորն Հեթում, և դամենայն թագաւորութեան իւրոյ զպարտութիւն կա ի ձեռս սրբոյն պարսն Լեոնի և ինքն ինչ յանկարծակի զիպեցաւ վերք ինչ ի մարմին նորա և յոյժ նեղէր գնա և էր նա ի պահս և յազօթս հանապաղ, մինչ զի առնել էր զինքն կրօնաւոր, և Մակար անվանեցաւ և յեա սակաւ աւուրց փոխեցաւ ի քրիստոսապետակ և բարեպաշտ թագաւորն Հեթում» 2):

Եվ այսպես վերջանում է կլիլիկյան հայոց Հեթում 1-ին թագավորի քաղաքական գործունեության մաս 50-ամյա շրջանը 3):

Հեթում 1-ին թագավորը մեծ պատվով զուրս եկավ իր պարտավորությանից՝ հանդեպ իր երկրի և իր ժողովրդի: Թեև Հեթումը հանգիստանում էր կլիլիկյան հայոց թագավոր, բայց նա կապ էր պահպանում նաև Մեծ Հայքի հետ, և նրա հետ ակտիվ փոխհարաբերության մեջ էր մտնում: Այսպես օրինակ, երբ Հեթում 1-ին թագավորը պատերազմ էր մղում Ռումի երբ Հեթում 1-ին թագավորը պատերազմ էր մղում Ռումի սուլթանի գործերի դեմ, Մեծ Հայքի իշխանները ուշի ուշով հետևում էին այն գործողություններին, որոնք տեղի էին ունենում հետմուք կլիլիկյանում:

Այդ մասին տեղեկություն է տալիս Մաղաբիա Արեղան: Նա գրում է. «Լուեալ ի ձեռն նամակ գրոց հայոց իշխանացն, որ կան յարեկելք և են բարեկամք և յոյժ սիրողք այս թագավորութիւնս զի գրեալ էին հայոց իշխանքն առ բարեպաշտ թագաւորն»:

1) Մաղաբիան պատմում է, որ Հեթում 1-ին թագավորի մահից հետո, Լեոն 3-րդ թագավորը ներկայանում է Հուլաղու խանին և նրանից հարգվում: «Իսկ պարսն որդի հայոց թագաւորին գնաց առաջ Աբաղայ դանին և պատմեաց զմահ թագաւորին: Եւ յոյժ սիրեցեալ և պատուեալ եղև ի դանէն, և առեալ հրաման վասն թագաւորելոյ իւր ի տեղի հօր իւրոյ»: (Տես Մաղաբիա—նույնը, էջ 51):

2) Մաղաբիա Արեղան—նույնը, էջ 48:

3) Սամուել Անեցիի Հեթում թագավորի մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս նա գրում է.

«Յետ այսօրիկ հիվանդացաւ թագաւորն Հեթումն, որ և մեռավ. իսկ լեալ կրօնավոր թագեցան ի սարին ուխան ի Դրաղարկն (յամի տեաան 1269 և հայ 201):» (Անեցի, էջ 222):

զաւորն Հեթում բանս միխիթարականս վասն որդոցն և վասն յեկրիս» 1):

Բայցի Հեթումից, կիլիկյան հայոց կաթողիկոսը, իբրև ամենայն հայոց կաթողիկոս, սերափոխարարութեան մէջ էր մտնում Մեծ Հայքի եկեղեցական և կրօնական գործիչներին հետ, աայով նրանց համապատասխան ուղղութեան:

Պատմագիրը հետաքրքիր տեղեկութեաններ է տալիս Կոնստանդին կաթողիկոսի գործողութեաններին մասին, նա գրում է.

«Յայսմ ժամանակի հանդիտանայր պայծառ և աւաքինի վարուք հաճոյ ատժու և մարդկան աէր Կոստանտինն կաթողիկոսն հայոց հանդերձ քրիստոսապատկ թագաւորուն Հեթումաւ, որ և լուսաւորեցին ուղղափառ հաւատով և պայծառ կարգօք զամենայն յեկեղեցիս Հայաստանայց յարեկր (Մեծ Հայք-Ա. Գ.) և յարեմուտս և յամենայն տեղիս»:

